



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը


You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material



891.99
25-58



391.542.3

ՅԱՐՈՒԹԻՒՆ ԽՍԱՅԵԱՆ

36-54

ԿԵԱՆՔԻ ԽՈՐՃԵՐԻՑ

(Պ.Ա.Տ.Ա.Յ.Բ.Շ.Ե.Բ.)

ԱԼԵՔՍԱՆԴՐԱԳՈԼ
Սրբատիլ-Տպարան Յովի. Ամինեանի.

1903

(11)

19 NOV 2011
6105

ՅԱՐՈՒԹԻՒՆ ԵՍԱՑԵԱՆԻ

891.99-3
Ե-58 ԱՅ

ԿԵԱՆՔԻ

ԽՈՐՃԵՐԻՑ


(Պ. Ս. Կ. Ե. Ր. Ե. Ր.)



ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈՂ
Արագածիպ-Տպարան Յովի. Արինեանի.
1903

(11)

ՕԲԱՅԻ ՀԵՐՈՍ ՆԵՐԸ



Օբայի ամառային օրաներից մէկի է,
Այսօր, շաբաթ, երեկոյեան շատ մեծ
Հանդէս է լինելու N... եկեղեցամ:
Ճիշտ է, Թիֆլիսում ամառը ստորին
արհեստի մարդկանց համար առուտուրը առհասա-
րակ շատ քեսատ է լինում, բայց օրաների ժամա-
նակ փոքր ինչ կենդանանում է զատարկ շուկան և
գրաններում կոպէկներ են երևում: Երիտասարդ
մարդիկ շտապում են պարիվճախէրների մօտ, բան-
ուորները գալաքների մօտ՝ մազերին կոկիկ ձեւ տալու
և երեսների մազը վերցնելու. գերձակները ստացել
են շուտափոյթ պատուէրներ: Կօշիկ սրբողներն էլ
այդ օրը մաքրելու գինը կրկնակի, եռակի են դար-
ձրել. այդտեղ որոշ տակսա կամ սակագին չը կայ:
իսկ պարփիւմների պահեստում մուշտարիների

Дозв. ценз. 5-го Сентября 1903 г. тор. Тифлисъ.

թիւը, խօ, ոչ հաշիս ունի, ոչ համար: Մէկը դախի, օդրկօլօն է ուզում, միւսը՝ էնվառնողի կրէմը, երբորգը նոր հնարած հրաշալիքներ՝ երեսը սպիտակիցնելու ու թշերը վարդագոյն դարձնելու: Ահա մէկը «գեղեցկութեան զաղտնիք» սապոն է պահանջում, մի փոքրիկ թղթի կտորի վրայ նըշանակած ունենալով այդ անունը, որ լրագրի յայտարարութիւնից է քաղել: Ահա և մի ուրիշը պատկառելի քթով և երեսի գոյնը ու ածուխ, շտապեցնում է ծախողին և նւրգէնսի տիմօլեան ստագոնն է պահանջում—բիթը քնքշեցնելու և զէմքը դեղեցկոցնելու յուսով . . . Ունար սովիտակ մագիրը սև դարձնելու համար միջոց են հարցնում: Անվերջ հն պահանջողները . . .

Մի խոսքով հասարակ դաստիարգի համար մեծ եղելութիւն է օբան: Չալօներն ու մամիկաները հսկուի ցնծում են օրայի դալստեանը, որի ժամանակ միայն. նրանիք լաւ, ուրախ ժամանակ են անցկացնում ու միւս ժամանակուայ «ջիգըր» հանում:

Ի՞նչ անէ, խեղճ թիֆլիսեցի ձալօն, քանի որ նրա համար շը կայ թատրոն, երեկոյիթ, զբոսանը, ցիրկ և այլ զուարձութեան տեղեր: Նրա ամուսինը լսել անդամ չէ ուզում դրանց մասին: Նա չէ ոիրուն այգոլիսի տեղեր և չէ թոյլ տալիս, որ կինը յաճախէ, վախենալով, որ մի զուցէ կինը զայթակըուի այդ տեսարաններից: Եւ եթէ երբեմն-երբեմի ձալօն ասում է մարդուն—«Բա մարդ, ասում են,

Եկաւց լաւ հայոց թեատր կայ, ի՞նչ կըլի ինձ տանես», մարդը շարանալով պատասխանում է.—«Ի՞նչ իս տուտուց-տուտուց դռւ տալի, այ ինիկ, մեր ի՞նչ բանն է թեատրն ու ցիրկը, մինք ի՞ն ուսումնակաների օյինքաղութիններից շինք հասկանայ. ուզում իս, իս կու խաղ անեմ, դռւ թամաշա տու. իժում դռւ խաղ արա, իս թամաշա տամ, այ քեզ թեատր . . . »:

Բայց որքան ժաման է և խնայող ձալօյի մարդը թատրոնի ու այլ ներկայացումների համար կոպէկներ ծախսելում,—նոյնիք նա առատաձեռն է ու «զոմարդ» ուխտատեղիներ երթալու, մատաղ անելու ու լաւ քեփ քաշելու մէջ: Թէկուզ նա պարաք կ'անէ ու կը զնայ Վխթէրայ, Զփինդիս, Թէլէճ, Կրծանիս ու այլ ուխտատեղեր:

Իսկ քաղաքի օրաներից, խօ, ոչ մի ձալօ կամ մամիկաս պակաս չի մնայ:

Հապա տանը մնացած՝ պառաւած աղջիկներն որքան են ուրախանում օրայի համար: Նրանք կամ տկեղութեան կամ մարմնաւոր արատաւորութեան և կամ աղբատութեան պատճառով ոչ որի չեն դուր եկիլ, ոչ որ չէ մտածել նրանց մասին, չէ հաւանել ու ամուսնացել: Իրանց տանը «մօցիկուրգալու յայր խօ վաղուց են կարել: Ելի յոյսն այն է, որ օրաների ժամանակ շինծու զեղեցիկ գէմքերով, արդ ու զարդով, զոյնզգոյն շորերով, կեղծ քաղաքավարութեամբ, նազանիով ու ձարպիկութեամբ զրտեն

միքանի խամ մարդոց ու մի կերպ հարսնացու ընտրութիւն նրանցից։ Եթէ այս յոյսը չը լինէր, նրանք վազուց կուսանոց մտած կը լինէին։

Երեկոյեան ժամի հինգն է, եկեղեցիների զանգերը զօդանշում են միմիանց և տակից և օքա հրաւիրում օբայականներին։ Ն . . . եկեղեցու նիհարգանգն այդ օրը, կարծես, աւելի զօրեղ ձայն էր ըստացել և հնչում ու զօդանշում էր աւելի ուժեղ, կարծես, աշխատելով խլացնել միւս եկեղեցիների զանգերի ձայնը։ Խոկ մզգսին, տէրտէրներն, տիրացուները խօս, էլ մի ասի, թէ ինչ զուարթ տրամադրութեան տակ են գտնւում։ — Դեռ երէկ գիշեր նրանք գրպանները լաւ զննել են, որ եթէ բանդուած կամ գրպանները լաւ զննեն, կարեն և երկրորդ կարն էլ վլպատռուած լինեն, կարեն և երկրորդ կարն էլ վլրայից անցկացնեն, որպէսզի դիմանան խաչահամբոյրի ծանրութեանը։ Այսօր մզգսին նոր ուժով է զանգահարում և միենոյն ժամանակ մտքում լուռ հէզար է անում, թէ ինչ անէ ստանալիք փողը։ Եւ տես, որ օրաւորները հագած, զուլուած, պատրաստ են և հենց որ զանգը զարկեց, նրանց ծայրը բաց եղաւ։

Ահա խմբով ձալօներ, մամիլաններ, դիդէզաներ, օրիսրպիներին առաջ զցած, յամը քայլերով զիմում են օքա։ Ամեն մէկը հագել է իր ամենալաւ հագուստները, որ կարողանայ շատերի ու շաղբութիւնը զբաւէ։ Ոմանք հագնուել են վերջին մօդայով։ Թիւնը զբաւէ։ Ոմանք հագնուել են վերջին մօդայով։ Շատերն էլ, որոնց ճաշակն զեռ նախկինն է մնացել, շատերն էլ, որոնց ճաշակն զեռ նախկինն է մնացել, որոնք մօդայի տարազով։ Կային այնպիսիները, որոնք

շափազանց ուռցրել էին օսլայած շորերը, իսկ նուրը կազմուածքները կօրուաներով սաստիկ նրբացրել և ըներոյն մէջքերն այնքան բարակացրել, որ չէր կարելի մէջը պարանոցից զանազանել։

Դէյքանները թանկագին կտորից, կօշիկները բարձրակրունկի, գեղին, զլսարկները ծաղիկներով զարգարուած, բայց շատերինն էլ այնքան մեծ, ժամանէններով, ծաղիկներով, կտորներով, կանանչներով և այլ անպէտք իրերով զարդարած, որ ծաղկանոցի թիւնոցների էին նմանում։

Գնում էին նրանք իրանց լաւ տրամադրած, անհոգ, բազցը զբոյց անելով, ծիծաղելով, հոռոալով, առանց միմիանցից ամաշելու ու փողոցներում փոշի բարձրացնելով։ Այդ օր «զփօրնիկներն» էլ էին ուրարտախանում փոքր ինչ, որովհետեւ այնքան աղջիկ ու կին էին անցնում փողոցներով, որ իրանց գէյքաններով մաքրում էին ու նրանց զործը թեթիացնում։

Եղանակն էլ լաւ էր, սակայն չոգ էր, որ սաստիկ անհաճելի էր աղջիկներին, որովհետեւ երեսների վրայ ցանած պուլքան բրտնքից վնասուում էր։ Միայն միքանի հեռատեսները նախօրօք մտածել էին այդ մասին և պուլքայի փոքրիկ արկղը զբանը զրել, որ շուտ-շուտ մութ անկիւններում երեսի գոյնը թարմացնեն . . . Մէկ ձեռքում րիգիկիւնները և հովանոցները բռնած լինելով, նրանք միւս ձեռքով հովարում էին երեսներն անընդհատ։ Ամեն մէկի երեսին՝ փոքրից սկսած մինչև մէծը ժպիտ կար, նրանց

արտայայտութիւնները բերկրանրով էին ցողուած։

Ազդիկներն իրանք էլ զմայլած իրանց հակուստից, շարունակ նայում էին իրանց շորերին, մերժուզում, մերժ մագերը կոկում, ու երեմն էլ կանգառնում փողոցում միմիանց շորեր ուղղելու։

Եկեղեցու դրսից՝ փողոցից սկսած մինչև ներս՝ բակը մանրավաճառները դարսել էին իրանց իրեղինները օրայականների համար։ Որը տահձ էր ծախում, որը սիմբնոր էր խորովում և իր թէ ինքըն էլ գարմանալով սիմբնորի լաւութեան վրայ, շարունակ գոռում էր բարձրածայն։ «Պահ, պահ, էս ինչ է տօ, թամամ զադրանիշնի է . . .», Բակում՝ ուխտաւորների համար յատկացրած բաղինջոտ ունեակները զեռ մի շաբաթ առաջ են բռնուած ուխտաւորներով. շատերն էլ դուրս, բակի մէջ տեղում վրաններ են զարկել։

Մթնչողի ընկաւ։ Յոլոր եկողները եկան, փողոցից մինչեւ բակը լի է խուռն բազմութեամբ։ Էլ սվ առես, որ չը լինի այդտեղ, — կինտօններն իրանց ապրանքներով, ջիրդիլները, անթիւ անհամար աղջիկ ու կին, մեծ ու փոքր։ Հարա-հրոց, ագմակ, երգ, պար, դիմպլիպիտօ, բաղալի բացականշութիւններ, էլ հազար ու մի բան . . .

Փատերի տակ նստուած են այն ուխտաւորները, որոնք լուսացնելու հն ամրողջ գիշեր և այդ նըսպատակով էլ վագ են եկել տեղ բռնելու։ Ամեն մէկը իր համեմատ ընկեր է գտել և զբաղուած է իօ-

ռակցութեամբ։ Զալօնները ջոկ են խմբուել, պառաւները չոկ են մասլահամբ անում, բուռնօթին հայհարայ բիթը ներս ուղարկելով և հոգոցներով յիշելով իրանց երիտասարդ հասակին ու անցրած ժամերն օբաններում։ — Իրանք պատմում են իրանց լիշտութիւններից։ Ջատ պառաներ էլ աղջկայ ու տղի մասին են խօսում, կարծէքներ յայտնում, նշանում և կամ նիւթ շտմնեալով խօսելու՝ սրան-նրան են բամբասում։ Աւելի ջերակուանիզներն էլ շարունակ «մեղայ Աստծոյ» են բացականչում։

— Սրանից ութը տա՞ի առաջ աղջկաս խիստ հիւանդացաւ, պատմում էր մի կին իր խօսակցին։ — Էնէնց որ հոգին բերնումն էր։ Էլ ինչ հէքիմներ, կիթիսաներ, ջադօ անողներ, բժիշկներ առես, որ խեզճ մարզս չը կանչեց, համա սրանք մի մազի շափ օգնութիւն չ'արին։ Մի գիշեր էրազումն տեսայ, որ միթօմ թէ, մի կիսիկ էլաւ ինձ ասեց, թէ «Քուր էք գեղերի ու գարմանների յիտեից ընկել, զբանով չի սազանայ աղջիկդ։ Ես Մարիամ Առուծածինն եմ (այս խօսքի վրայ երկուսն էլ միտժամմնակ խաչակնեցին երեսները), էկէք իմ գուռը, մատակ արէք ու ձեր աղջկը կը լաւանայ։ Էտէնց էլ արինք, ու աղջիկս լաւացաւ. Իրանից գէսր տմեն տարի իրա օքին զայիս եմ լիսացնում ու մի մատակ անում, մեռնեմ նրա սուրբ գօրութենին։

— Ծառայ եմ կամակատար Աստօծածնուն, մըրմընչաց լսող կինը և ջերմնեանդօրէն զարձեալ խա-

շակնեց երեսը:

— Համա էս խալիք վիտացել է, քա՛, միտզ է հին օրէքը, ուղարք մատագ էր ահում, լիսացնում ժամի հայաթում. համա հիմի կի դիվ ջէ-նէլ ջուհուներով լցում է էսագանց օրէն ու աղջիկների հետ պագրուչկա արած ման ին գալիս:

— Հա՛, հա՛, դրուտ է, դրուտ, ինգուր էլ Աստօձ բարկացել է մեկ վրայ, չունքի էլ նրան հաւատացող չը կայ, վրայ բերեց միւսը:

— Փարմասօն են զարձել հիմիկուայ ջէհեները, ոչնչի չեն հաւատում . . .

Ըստ կանայք էլ յորդորում էին իրանց աղջիկներին զրօնիկ, շփուել սրանքա հետ: «Քնացէք, որդիք, գնացէք, ման էկէք, խօսեցէք, ծանօթացէք, բալքա Աստօձ անէ մի լաւ տղի ճանկէք ու բախտաւորուիք» ասում էին նրանք աղջիկներին:

Այս ինտելիգէնտ ճանաշուած՝ պրօսպէկտի ու մաւշտայիդի հերոսները սկսեցին առաջարեզ բանալ բակի մէջ տեղում: Լէն շալվարաւորներն էլ նրանց օդիութեան հասան: Նրանք հրում էին աղջիկներին՝ զանազան մասիարութիւններ անելով, ոմանց աշքով նշան անելով, ոմանց երեսներին ժպտալով:

Վերջապէս մի փոքրիկ տեղ բացուց և «գլուխ կատարելապէս միջնեց. բագի մէջ քաշ արած թղթեայ զունաւոր լապտերների մոմերը վառուեցին, պրծան: Էլ պարզ չէն տեսնում իրար: Պարելուց յետոյ Գարշելեանն իր ընկերների հետ եկաւ մի կողմ կանգնեց ու սկսեց բրտինքը սրբել, նայելով այս ու այն կողմը, տեսնելու թէ, քանին հին իրան երանութիւն տալիս:

— Գարշելեան խաղ արա, լսուեց ժողովրդի միջից մի ուժեղ ձայն:

— Գարշելեան, Գարշելեան, խաղա, գոռացին շորս կողմից:

Յանկարծ մի երիտասարդ պարոն մէջ ընկաւ ու սկսեց թռչկոտալ: Նա տաքացաւ, կարմրեց, քրտնեց, փրփրեց: Ինքն իսկ զարմանում էր իր ճարպիկ խաղի վրայ և շարունակ գլուխը բաշ՝ նայում էր ոտներին: Սպա կանզնեց և իր ծանօթօրիորդներից սկսած մինչև անծանօթ շատ շատերի պար ածեց: Նա պարում էր, չէր յոպնում և ժողովրդի ովսաննաները աւելի ովերում էին նրան: Գայրա, նաղարա ածոյների հերթապահ նշանակուեցին, որովհետեւ նրանք յոպնեցին, չէն կարող երկար նուազել և ճիշտ ասած, իրանք էլ ցանկանում էին պարել և Գարշելեանն իհարկէ զանց շառաւ ալդ բանը,—և ամենաբարեցյշ, ամենախորհրդաւոր ժպիտով նրանց էլ պար ածեց:

Սպա պարեցին և ուրիշ երիտասարդներ ու հարսներ:

Արդէն կատարելապէս միջնեց. բագի մէջ քաշ արած թղթեայ զունաւոր լապտերների մոմերը վառուեցին, պրծան: Էլ պարզ չէն տեսնում իրար: Պարելուց յետոյ Գարշելեանն իր ընկերների հետ եկաւ մի կողմ կանգնեց ու սկսեց բրտինքը սրբել, նայելով այս ու այն կողմը, տեսնելու թէ, քանին հին իրան երանութիւն տալիս:

— Կլցցէ պարսն Գարշելիան, կլցցէ, ասում
էին անց ու դարձ անող ծանօթ և անծանօթ մար-
դիկ, ոմանք կեղծ, ոմանք անկեղծ կերպով, և նա
լցում էր անհուն բերկրաներս:

Արդին մեծ մասամբ աղջիկները կավալէրների
հետ են: Ի՞նչ բացցը են մասլահաթ անում նրանք:
Անցնելու ժամանակի լսելի են բոլորի բերաններից
սիրային և փաղարշական բառեր ու խօսքեր: Մի-
մայն միքանի լուրջ երիտասարդներ, որոնք եկել
են լոկ հետաքրքրութեամբ, մի կողմ կանգնած դի-
տում էին օրայի ընդհանուր տեսարանը: Եւ միքա-
նի տղեղ կամ ծաղկատար աղջիկներ էլ մի տեղում
կանգնած լուռ ու արտում նայում էին երջանիկնե-
րնն, կավալէրներով շրջապատուած, իսկ իրանք
աշբից թողած, արհամարուած . . .

Աշակերտներն ու աշակերտունիներն էլ տօնա-
կան հրճուանքով և կրօնական զգացմունքով լցուած
շուտ-շուտ ժամում էին եկեղեցի, համբուրում սրբերի
պատկերները, ապա դուրս գալիս ու շրջում . . .

Մի կողմում խմբուած էին մի խումբ ձայնե-
տորներ և երգում էին խմբովին: բայց որովհետե-
ամնի մէկը տքնում էր ուժեղ երգել իր ձայնը ցոյց
տալու համար, ուստի ոչ թէ երգի էր նմանում նը-
րանց երգը, այլ մի խմբովին գոռզոռոցի . . .

— Սերովի, դարձաւ մի երիտասարդ բէալիստ
ընկերոջը, երբ ես զնում Գետերբուրգ աւումդ շա-
րունակելու:

— Այս ամսի վերջերին, և զժբախտարար զրկուե-
լու եմ այստեղի գեղեցիկ օրիորդներից, պատասխա-
նեց նա բարձրաձայն, ձեռքով ցոյց տալով շուրջը:

— Ոչինչ, այնտեղ աւելի գեղեցիկները կան,
ծիծագեց ընկերը՝ նայելով մօտք խմբուած օրիորդ-
ներին:

Այդ բաղէին նրանց մօտից անցան երեք փոր-
րահասակ տղաներ օրիորդների հետ:

— Ես սիրում եմ համբուրել վարդը, բայց ոչ
օրիորդներին, ասում էր նրանցից մէկը նայելով հե-
տի օրիորդին, — արգեօք լաւ չիմ անում, օրիորդ:

— Ի՞նչ էր ասում, ես չիմ հասկանում, վրայ
ըերեց օրիորդը ժամածուութիւններով

— Փշանում են փորերը, նկատեց Զոհրաբը
գտրձեալ բարձրաձայն, — լսեցիր ի՞նչ էին խօսում:

— Այն, փշանում է ժատալ սերունդը, վահ-
րացրեց Սերովին, նայելով նոյն օրիորդներին:

— Յաւալի երկոյթ է, մէջ ընկաւ միւս ընկերը:
Այդ խօսակցութեան ժամանակ թիանցուկ սը-
րանց մօտով անցան երկու գեղեցիկ օրիորդներ:

— Պահ, պահ, ի՞նչ հրաշալի բաներ են, օ՛հ,
մնանակ են, էս լաւ է, խսկոյն ծանօթանամ, գուը
ոպատեցէք այստեղ, ասաց Սերովին ու շտապեց
նրանց յետեից:

— Աջ կողմինի գէմբը լաւ է, նկատեց միւս ըէտ-
լիստը, որ աւելի շատ նայում էր այս ու այն օ-
րիորդին, բան խօսում ընկերների հետ:

— Թրամի հայեացքը երջանկութիւն է, աւելացրեց Զոհրաբը:

— Թո՛ւ, անյաջող է, ասաց Սերովը մօտենաւով լնկերներին, — զնացին ծննդների մօտ նստեցին:

Յանկարծ մի կողմից լսուեցին կանացի ձայներ:

— Ծիպլիան, ծիպլիան, գոռում էր մի ցածրահասակ կին միւսի վրայ, յիս իսկի լայեղ չիմ անի ըիզ նման մոթքէուների հիդը խօսիմ:

— Հուզիմ քու բնեղիան զլուխը, պատասխանին միւսը, բաս յիս ըիզ նման տուտուցների հիդ կը խօսիմ, քօքօլա մաք թափսա, ասաց նա ու երկու ձեռով նշան արեց:

— Խոռով կենա քու ուխտն ու մատաղը քու զբլին, քու օջախի գլխին, հա: Ո՞նց որ գու իմ օջախը մուռտուեցիր, էնէնց էլ Աստօծ մուռտոէ քու օջախը: Քա, զէթագուա, դարձաւ նա հաւաքուած կանաց գանգատութով, — էսէնց էլ օյինքազ ու անաստօծ մարդիկ տէնել էք, բա, տարի ու կէս է, տղէս նշած է նրա բէդասլ ապջկայ վրայ. Խոստացել են, որ բաժինը ու քսան թուման փող պիտի տան: Առաջ կի ուզում էր էս կապ կտրածը տղիս խափէ, զժուացնէ, տանի տնիկնայ. ոչ փող, ոչ բաժինը տայ, իմ պահած, մենձացրած տղին խէ ինձմէն, ես նամուսի խաթեր ձէն չէի հանում, շունքի գիտեմ իմ տղիս խասիաթը, նա հալալ կաթ է կերել: Իժում ուզեցայ նշանը յետ վեկալնեմ, համա էլի համբերեցի, խնդրեցի, որ բանը

քաղցրութենով պրծնի, համա որանիր ոչ «չէ» ին ասում, ոչ «հա»: Տղէս ասում է, — «գէգի, չիմ ուզում փող ու բաժինը, թոզ պակութիմ», — համա իս ի՞նչ կու թողամ: Քա, ախր ամօթա առելն էր, սիպտակեղինն ու փողը կէս է անում, — հինգ թուման է տալիս ու յիմէք ձեռք սիպտակեղին. համա թրդթումը կի գրած է քսան թուման ու սիպտակեղին վից ձեռք:

Վերջին խօսքերի վրայ բոլոր սնկնդիրները բարձրածայն քրիզ հանեցին. լսուեցին զանազան բացականչութիւններ: Բայց նրանք շարունակեցին կուին առանց պատկառելու:

— Մի չոփ էլ շիմ տայ, որ աչքումդ զնես. ասաց հակառակորդ կին, բռունցը բռունցը զարկելով:

— Հա, հալրաթ շիս տայ, որ աղջկանդ համա սիրական պահիս, աննամուս:

— Ենինամուս էլ իս, բէդասին էլ, ում ավշմին ունի սիրական, կատաղեց վերջինս և արդէն բռուրովն վիրաւորուած զգալով, յարձակուեց միւսի վրայ ու զարկեց բռունցը:

Դէս հիմայ դու տես թամաշէն, խալին էլ էս էր ուզում: Նրանիր բաշրշում էին միմիանց մազերը, շիրիէրն ու շորերը պատառուում, հայնոյում, թըշըշիէրն ու շունքի գիտեմ Կանայք հեռու փախան իսկ տղամարդիկն էլ չէին ուզում նրանց բաժանել. — այլ հեռու կանգնած, ծիծագում էին այդ տեսարանի

վրայ: Վերջապէս մօտեցան երկու ոստիկան ու բաժանեցին նրանց: Բարեբախտաբար նշանած աղջիկը չէր եկել օրա:

Սերովին ու Զոհրաբը կանգնած յափշտակուած նայում էին կռուսզներին, որ մէկը զարեց Զոհրաբին: Դա օրիսրդ չրանոյշն էր: Նա մի փոքրահասակ, խոպոպիկ - շապանակագոյն մաղերով, նիհար, սպիտակագոյն, գեղատեսիլ աղջիկ էր: Գլխարկը ծաղիկներով զարդարում՝ թէր զրել էր գէպի աջ կոզմ, հազար ունէր կապտագոյն շիթ գէլրա լրկինակի ծալքերով, մէջքը՝ բարակացրած կորսէտով, բարձրակրունկ ու կիսակօշիկներն էլ նուրբ ստիճանին:

— Օ՛հ, չրանոյշ, ուրախացաւ Զոհրաբը, բռնիւալ նրա փոքրիկ, գեղնած ձեռքն ու սեղմելով, չրանոյշի հետ էին քոյրը՝ նազինկան ու երկու ընկերունիքը:

— Ինչո՞ւ ուշացաք, հարցրեց Զոհրաբ:

— Զարժացի Է՞ք այս կռուի վրայ, չը պատասխանբով Զոհրաբին հարցրեց չրանոյշը:

— Ինչո՞ւ զարմանալ, տղէտ են նրանք, ուրիշ ոչինչ:

— Անցնենք, պարոնայր, ասաց չրանոյշն ու թէն անցրեց նրա թեին. — զրօննենք մի քիչ:

Նրանք դանազան մտերմական խօսակցութիւններով սկսեցին շըջել ժողովրդի մէջ:

Մի երկու պտոյտ անելուց յետոյ հանդիսեցին մի ուրիշ խումբ տղաներ:

— Յտեսութիւն, պարոնայր, անաց անսպանի կերպով չրանոյշն ու մօտեցաւ նրանց, միու ընկերունիներն էլ հետեւեցին նրան:

Մեր երիտասարդները վշտացան չրանոյշի բաժանուելոց, որ իրանց զբագեցնում էր ու զլսիկոր գնացին, կանգնեցին եկեղեցու պատի տակ, կարծես մի մեծ կորաւոտ ունեցած լինէին:

Փոքր ինչ նրանցից հեռու, պատի մօտ նստած էր միջին տարիների մի կին ու լուռ միմնջում էր: — Նա ազօթում էր: Հազի սև ցնցոտիները պարզ ցոյց էին տալիս, որ նա խեզմութեան ճիրաններում տառապում էր:

— Ո՞վ զօրաւոր սուրբ Աստօծածին, գու օպնիոնձ, մրմնջաց նա լսեիի ձայնով ու արտասունըները գլորուեցան նրա նիհար երեսի վրայից:

Սերովին ու Զոհրաբը յետ նայեցին:

— Ե՞ս, ոս էլ Ժամանակ է գտել լալու, ասաց Սերովը:

Նրանք յանկարծ նկատեցին իրանց մօտ մի զեղեցիկ օրիորդ, որ մօր հետ նստած նստալանի վրայ, անտարբեր կերպով նայում էր բազմութեանը:

— Ի՞նչ զեղեցկունի է, ասաց Զոհրաբը:

— Իրօք զեղեցկունի է, վաւերացրեց Սերովը, բայց ափսոս, մայրը հետն է:

— Չէ, ոս լուրջ աղջիկ է երեսում, ահս, ինչ սէս սասն կերպով է նայում շորջը կտտարուող երեսյթին:

— Սիրելին մօտը չէ, դրա համար է տխուր,
մեկնեց Սերովբը բարձր ձայնով, երեխ սպասում է:

Օրիորդը նկատեց, որ նրանք իրան են նա-
յում և իր մասին խօսում, արհամարհական հայեցք
ձգեց նրանց վրայ ու նայեց հակառակ կողմը:

Սերովը մասսամբ ճիշտ նախագուշակեց, որ
նա մտածում էր իր սիրելիի մասին ու սպասում:
Բայց այս օրիորդի սիրելին իրանց նմաններից չէր:
Օրիորդի աշքերի մաքուր և անմեղ արտայայտու-
մինը վկայում էր նրա պարկեշտութեան մասին:
Մի տարի կ'լինի որ նա սիրահարուած է մի պա-
րոնի վրայ: Օրիորդն մտածում էր նրա մասին ու
անհամբեր սպասում նրա երեալուն,—բայց վեր-
ջինս չէր եկել օրա: Լուռ զիտելով իր շուրջը,
օրիորդը զարմանում էր իր նմանների վրայ. ինչ-
պէս նրանք անհոգ, ուրախ շրջում են այս ու այն
կողմ, մէկին թուղթելով միւսին մօտենում, կատակ-
ներ անում, հոհուում, ծիծալում Ինչու
ինքն էլ չէր անում, ինչու իր սիրած տղին այդ-
պիսի բաներով չէ զբաղում երբէք:

— 2է, դա նրանցից չէ, եղրափակեց Զոհա-
րը, ախորժակի փակիր: Եւ երեսը շրջելով միւս
կողմ, լսեց թէ ինչպէս

— Մեզայ բեզ Աստուած, հառաշեց նոյն պա-
ռաւը, ձեռքերը փարելով ու նայելով դէպի վեր:

— Զահլա տարաւ, էլի էս բաւթառը, նեղա-
ցաւ Սերովը:

— Դուն իմ Գիգօլին առողջութիւն տաս, ո՞վ
կամակատար Աստօձածին, ո՞վ Հայուց Լուսաւորիչ,
սրբեր,—շարունակեց պառաւը զերմառանդութեամբ
լի. Խիդ էկէք նրա չէնէլ—զիւան արեին ու ինձ,
էս անբախտիս: Ի՞նչ մեղք եմ արել, Տէր-Աստօձ,
որ մարգուս, որդոց տարար, հիմի էլ մի հատիկ
տղիս ես ուզում տանել, էս կնկանս ու քառիին
բաղցած թողնել, հեկեկաց նա ու ձեռքով շոյեց
մօտը նստած փոքրիկ՝ վեց տարեկան աղջկայ գը-
լուխը:

— Գիգէդ ջան, մի լաց ըլի, ասաց աղջիկը
բանելով մեծ մօր ձեռքը:

— 2եմ լաց ըլի, բալէս, չէ, աղմօք իմ անում
Աստծուն, ինկըրում եմ, որ բալքա քու մամին լա-
ւութիւն տայ, հանգստացրեց կինն աշքերը սրբելով:

Նրա կրծքից շարունակ դուրս էին թռչում
խոր հոգւցներ. նա այրի էր. ունեցել է երեք որ-
դի, որոնցից երկուոր զեռ շամուսնացած վախ-
ճանուել էին, իսկ երրորդն էլ, որ ամուսնացած էր
և ունէր այդ փոքրիկ աղջկելը, տկար, պառկած էր
անկողնում. նա էր միակ աշխատաւորը, ուստի նրա
տկարանալովը, ընտանիքը զրկուեց օրական չոր
հացից:

Հիւանդ բաղցած, ծարաւ, առանց բժշկի օգ-
նութեան տառապում էր ցնցոտի անկողնում: Եւ
այս կինը՝ նրա մայրը, սկսեց մուրացկանութիւնն
անել ու այդ կոպէկներով պահել թէ հիւանդին,

թէ հարսին ու թոռնիկին:

— Ան հոգիս առ, Աստօծ, ան ազատիր էս
վիճակից, իմ էրէսս քու ոտին տակին, շարունա-
կեց նա ազօթել, համբուրելով եկեղեցու պատն ու
միքանի անգամ խաչակինքեց երեսը:

Երկինքը՝ որ առաջ պարզ էր, ծածկուեցաւ
ու—ու ամպերով, որոնք բողարկեցին աստղերն ու
նրանց լոյսը կլանեցին. լուսեց ամպի խուլ որոտ:
Ահա փայլատակեց կայծակը լուսաւորելով վայրին-
ապէս ամբողջ օրան իր բազմազան ժողովրդով.
լուսեց երկրորդ աւելի ուժեղ զոռոցը:

— Դիգէդ, վախենում եմ, մըմնջաց փարբիի
աղջիկն ու պինդ սհզմուեցաւ մեծ մօր կրծքին:

— Մի վախի, բալէս, ոչինչ չի բի, Աստօծ
քիշ բարկացաւ, որ օրա են եկել, ոչ թէ աւստ ա-
նելու, այլ գատարկ մանգալու, ու լիրք մատլահաթ-
ներով պարապելու.— Մի բարկանար, Աստօծ, այլ
ազատիր շարից ու փորձանքից, ասաց նա ու վեր
նայելով կրկին խաչակինքեց երեսը . . .

Գըռուրու . . . լուսեց երրորդ ուժվին զոռոցն
ու անձրել հեղեղի նման սկսեց թափուել վերից,
անխնայ կերպով թրջելով ու ցեխոտելով օրաւոր-
ների հազուստներն ու ամառայիննուրբ զլխարկնե-
րը . . . Հատելն շտապեցին տուն, ոմանք պատո-
պարուեցան սենեակներում ու վրանների տակ, ե-
կեղեցում, բայց այդ խեղճ կինը չը կարողացաւ ոչ
մի տեղ պատսպարուել. նրան հրում էին բոլորը և

բոթում դուրս:

— Ճորիքիս մի դիպչի, էյ պառաւ, Էնթէնք
գնա, քու աբրէշում շորերդ խօ չեն խարաբ ըլի,
առում էին օրփորդները, տիկինները և հրում նը-
րան: Եւ նա աեղ չը գտնելով, մնաց եկեղեցու
պատի տակ իր թոռնիկի հետ կոչ եկած և ան-
ձրիլ թրջեց նրանց կատարելապէս . . .

Միքանի բոպէից յետոյ անձրել բոլորովին դա-
դարեց: Ամպերը շտապով հեռացան երկնակամարի
վրայից, տեղի տարով պայծառ աստղերին ու ար-
շալոյսին:

Հատ շանցաւ. արեելքն սկսեց շառագունել
վարդագոյն ամպերը աւետեցին պայծառ արեի ծա-
գելը: Ժողովուրդը ոտքի ելաւ: 2որս կողմից լոելի
եղան մատաղացու ոչխարների բառաշոյն, որոնք
կարծես զգալով իրանց վիրջին բոպէն, միաբերան
ողբում էին և իրար հրաժեշտ տալիս . . .

Մորթուեցան մատաղացուները, զոհի ծուխը
ամեն կողմից քուլա-բուլա բարձրանում է դէպի վեր,
տանելով իր հետ թէ հաւատացեալի անկեղծ ա-
զօթքներն ու խնդրուածքները և թէ թերահաւատ
երիտասարդների սիրաբանութիւնները . . .

Հնչեցին եկեղեցու զանգերը. կանգնեց պատա-
րազը: Թրում սկսեցին մատաղ բաժանել: 2որս
կողմից վրայ են թափուել ամեն մէկը մի պատառ
գոնէ մատաղ վերցնելու տան համար: Պատարազից
յետոյ բոյորն էլ մուրազն առնելու յուսով լի դիմե-

յին դէպի տուն . . . Ամենից վերջը միայն վերսլիշեալ
թշուառ կինն իր թոռան հետ՝ եկեղեցում երկար
աղօթելուց ու արտասունը թափելուց յետոյ, դուրս
ելաւ բակ. մի երկու կտոր մատաղ խնդրեց արանից-
նրանից ու հաւատով լի, շտապեց տուն իր տկար
որդուն մատաղի մինն ուտեղնելու, որ նրա զօրու-
թիւնն օգնութեան հասնի . . .

1902 թիւ



Հ Ո Գ Ե Հ Ա Ց Ը

Օսէփի Կալատօղեանեին թաղել էին այսօք: Խեղ-
ճը մեռաւ դեռ երիտասարդ՝ 23 տարեկան հասա-
կում: Նա զերձակ էր. թողել էր միջին տարիների
մի մայր և երկու փոքր եղբայրներ. իսկ հայրը չորս
տարի էր, որ մեռել էր:

Օսէփը հաբուստ չէր, որ աշխատում էր օր
ուտում—իր մօր ու եղբայրների հետ. նա բաղաքի
յետ ընկած թաղերից մէկում մի կեղտոտ բակի մէջ
վարձած ունէր մի խուլ, որին վճարում էր ամսա-
կան 3 մանէթ:

Օսէփը լաւ թնաւորութեան տէր տղայ էր, ուստի
նրան շատ էին սիրում իր համբարի ջէհները:
Թահից վեց ամիս առաջ նշանուել էր նոյն բակի
նկուղներից մէկում ապրող հարեանի նադինկա ա-
նունով աղջկայ հետ: Արդէն հարսանեաց պատրաս-
տութիւններ էին տեսնում, երբ յանկայծ Օսէփը
թոքերի բարբոքում ստացաւ ու մեռաւ, մեծ կսկծի
մէջ թողնելով թէ հարազատներին և թէ դժբախտ
նադինկային:

Հանդուցեալ Օսէփի մահից յետոյ ոչ մի կոտեկ
փող չը մնաց, որով թագէին նրան: Համբարը իր

մէջ ժողովարարութիւն արեց ու ժողովից մի չնշին գումար, որով միայն անշուր կերպավ կարելի էր թաղել մեռելին: Բայց «քաղրի աղաթներից» յետ մնալ չի կարելի, եթէ ոչ ասէկօսէների տոպրակները կը բացուին: «Քաղրի աղաթով»—նշանած տղայի թաղելու ժամանակ «գհոլ զուռնա պէտք է նուագէ, բայց թէ ինչ եղանակ, ի հարկէ, «միթօմ մելամադ եղանակներ» որպէսպի թաղումը աղդի ժողովովի վրայ, խոր տպաւորութիւն թողնի: Բայց միայն զուռնան չէր, որ անհրաժեշտ էր թաղման ժամանակ,—պէտք էր «միծ քէլէխ տալ, զաբուռ վըլաւ ու կարմիր գինին առատ լինէին սեփանի վըլրայ»:

Ի՞նչ անէր խեղճ Սօփօն—Օսէփի մայրը, քանի որ ցամար հացի փող անգամ չունէր: Նա իր մատների աշխատանքով յետ զցած ունէր ² մանէթ ⁷⁰ կոպ, ինչ կարող էր անել զրանով:

— 2է, Սօփօ, առանց քէլէխի ննց կուլի, ին նշանած տղի համար, էտ խօմ մեռլի հոգուն մինձ մեղք է, ոնց որ ըլի, փուղ զթի, գնա ման արի, մօդ արա, ամօթ չէ, մեռլի հոգու խաթեր է, խօմ ուրիշ բանի համար չի, խորհուրդ էին տալիս վըլշտալից Սօփօյին նրա զրկիցներն ու սպասր կանայք:

Սօփօն, ստիպուած եղաւ թաղումի նախընթաց օրը գանէ դուռ ընկնել, խանութից խանութ ու աղաշել, պապատել, որ «մեռլի հոգու խաթեր քէլէխի» համար նուէր տան: Նա մի կերպ հաւաքեց ⁷

րուբուց միբանի կոպէկ պակաս: Քէլէխի կարգադրելը՝ հանգուցեալ Օսէփի բիձէն ազաւ բրինձ, իւզ, զինի քէլէխի ճաշի համար:

Այսօր թաղել էին Օսէփին ու համբարը՝ որ բաղկացած էր ըստ մեծի մասին: Օսէփի ընկեր ջէնեներից, զուռնան ածելով վերապարձան մեռելատուն, նրանք շատ լուրջ էին. բոլորի դէմքերին պատել էր ընկերական վշտի արտայայտութիւնը:

Ներս մտան նրանք բակը, ոտի վրայ կանգնած մնացին մի փոքր ժամանակ, մինչև որ տէրտէրը հրամայեց նստելու սեղանի մօտ: Մինչ այդ զուռնան նուազում էր, փողոցում և հարկան տների վըրայ հաւաքուել էին հետաքրքրուողներ, ոմանք զուռնային լսելու, ոմանք գիտելու քէլէխը, ոմանք էլ պատահաբար անցնելիս հետաքրքրուելով էին կանգնակ:

Նստեցին սեղանի շուրջը, զուռնաշիներին էլ նոյնպէս նստեցրին: Տէրտէրը օրհնեց սեղանը բոլորն էլ սկսեցին ուտել: Խեղճ Սօփօն, թշուառ նազինկան՝ սև հազած ու սպառ կանայք նստել էին ներսաւմ սենեակի մէջ: Նրանք լալիս էին շարունակ:

Մկրտում ջէնէլները լուռ էին, նրանք ուտում էին հաց, պանիր, կանաչի: Գինի թիշ էր, «զինու ուստէրից» շատերը աշքերը յառած էին մնացել զինու շերի վրայ:

— Էս ի՞նչ թիշ է զինին, չչնչաց մէկը, իր մօ-

տի նոտովին, էս խօ իսկի մեր բօղազը չի թռչի։
Տէրտէքը վերցրեց առաջին բաժակը և հանդուցեալ Օսէփի հոգու փքկութեան համար խմեց, գինին կուլ տուեց մինչեւ վերջին կաթիլը, հապա երկրորդով՝ Օսէփի մօն ու բարեկամներին միսիթարութիւն մաղթեց՝ երրորդով մի ուրիշ բան ասեց ու վերջն էլ «պահպանիչ», և վերկենալով սեղանի մօտից, կանչեց կառափարշին, իւր վարձը ուզելու։ Այս ժամանակ տեղի ունեցաւ մի փոքրիկ սակարկութիւն, տէրտէքը դրականապէս պահանջում էր մի որոշ գումար, բայց վերջը զիջելով մի քանիսի թախանձանքին, քշով բաւականացաւ ու գնաց տուն։

Քէլէխաւորները ուտում էին ու սուս ու փուս զինին կուլ տալիս։ Զուռնան էլ փոխուեց գուգուկի։ Հետզհետէ քէլէխաւորների զլիները տաքացան։ Նրանք մոռացան որ քէլէխի վրայ են։ Սկսեցին ընդհանուր աղմուկ, խօսակցութիւն, ծիծաղ, հոհոց, վիճաբանութիւն։

— Տղէրք առանց թամագիի չի ըլի կամպանիէն, բացականչեց մէկը ոտքի կանգնելով, գինով լի բաժակը ձեռքին։ — Դառջօ ջան, բու կենացը, թամագիա գառմարջօս — (թամագիան ողջ լինի)։

— Դրուստ է ասում, դրուստ, Դառջօ բու կենացը, թամագիա գառմարջօս, լսեուցին չորս կողմից։

— 2է, ախպէր, պատասխանեց Դառջօն բարձր ձայնով, ես առանց զինու թամագութիւն չեմ

անի, ծիծաղում էք վրէս։

— Կինի բերէք, ջալզ (շուտ), հրամայեցին բոլորերեանք համարեա միաբերան, կարմիրը բերէք։

— Ինձ հմա սիպտակը, սիպտակը, զոռում էք մի ուրիշը։

Բայց զինին սպառուել էք։ Վերջին հինգ շիշըն էլ տուին ու էլ չկար զինի։

— Աբա, աղէք ջան, ստաքանները լցրէք, հրամայեց թամագին, բաժակը ձեռքին ոտքի կանգնելով։ — Էս կը խմենք մեր հանգուցեալ Օսէփի կինանցը, Աստօծ նրան մեր հայր Աբրամի զիրկը նլստացնէ, նրա հոգին լիս գարձեէ։

— Ճուշ, տուշ, աղաղակեցին միւսները։

Նրանք արգէն հարրել էին։

— Էս ինչ հող էք իմ զլիսին էկաւ, Օսէփ ջան, բու ցաւը ինձ գար, Օսէփ ջան, արտասում էք ներսում։ Սօփօն։

— Ճօ, հերիթ լաց ըլին, զահլա տարան, էլի, նեղացաւ չէնէներից մէկը։

— Թինի բերէք, զինի, հրամայեց թամագին։ Կառավարիչը՝ Օսէփի բիծէն մօտ եկաւ նրան ու ականջին ասաց, որ էլ չ'կայ զինի։

— Վայ բու չէնէլութեանդ ինչ ասեմ, Օսէփ, բարձրաձայն յարեց թամագին, — որ էզրան տպամարդութիւն չունէիր, որ մի զինու փող թողնէիր բու հոգու կենացը խմելու, վայ, վայ։

— Էս ինչ թաւուր քէլէխ է, որ զինի չը կայ,

Նկատեց մէկը:

— Լաւ, կինի, փսօն գէվէր գանք գիմառ համար,
հաջալի չէ, վարձր է, թէ չէ առանց զինի ոնց
կըլ՛, տռաջարկեց մի ուրիշը:

— Լաւ, լաւ, լաւ կըլի, հաւանութիւն տուին
բոլորը:

Վերցրին մի դատարկ ափոէ, շրջեցրին հեր-
թով, և ամեն մէկը առատօքէն գցեցին փող ափ-
ուի մէջ: Իսկոյն ուղարկեցին գինու յետեից և փո-
քըր ինչ յետոյ, մի մեծ տիկ կարմիր ու փոքր տիկ
սպիտակ զինի բերեցին:

Բոլորի համար: ուրախացան: Քէլէխը դարձաւ
քէֆ: Զունաշիներին հրամայեցին բայաթիներ յա-
ծել: Սրանք էլ մեծ պատրաստականութեամբ սկը-
սեցին բայաթիներ ու միաժամանակ դհօլչին իր
ուժեղ ձայնը բարձրացրեց:

Դիտովները և լսովներ զարմացան այդ բանին:
Ներսից լսում էին լացի, հեկեկանը ու սղբի ձայ-
ներ, իսկ զրում քէֆ էին անում, նուազում էին դու-
գուկ, երգում էին, կունտրատ ձայներն իրար խառ-
նելով մի վայրենի տեսարան էին ներկայացնուած
նայովի առաջ:

— Արա ջէնէլէրօ, լիքը լցրէր ստականները,
հիմի զինին բլօմա է, էս էլ խմենք ուստա Գիգօյին
կենացը, Աստօծ առողջ ջան տայ նրան, աջողու-
թիւն, առողջութիւն, որ նա հիմի ստրի վրէն կանգ-
նած է ու փլաւ է թափաղա անում, ու ջէր ինքը

բաղյած է, ոչ էլ զինի է խմել, ուռամ, տճւշ:
— Ամէն, ամէն, բաւ կենացը, ուստա Գիգօ
լսուեցին այլ և այլ բացականշութիւններ ու բարե-
մազթութիւններ:

— Օսէփ ջան, բու տօլերը (հասակակից) քէֆ
են անում, ու գուն սառ հողի տակ պառկած ես,
Օսէփ ջան, լսում էր ներսից Սօփօյի սղբը:

— Դէ լաւ, գէգի, հերիք լաց ըլիս, մհնք ըստի,
էս աշխարհում ենք քէֆ անում, որ Օսէփին էլ եր-
կնքումը քէֆ անի, ասաց մէկը բարձրածայն:

— Սօփիկօ, ոնց ըլաւ բու էն մուշտարու բանը:
Փողի առար, հարցրեց մէկը ընկերոջ:

— Վա, աշքի լիսն էլ չը հանեցի, համ կտորը
փոխեցի, համ նեղ կարեցի, փողն էլ առայ ու մի
լաւ էլ զնկսեցի, էնէնց ճամրու զրեցի, ինձ ծիպ-
ծիբանց Սօփիկօ կասին, գիտես:

— Միտդ ա, նիկօ, Օթթաճալի բակումը որ
քէֆ արինը, օղորմած հողի Օսէփին էլ էնպի էր,
ինչ լաւ ժամանակ անցկացրինք, լազաթ էր, լա-
զաթ, ասում էր մի ուրիշը իւր դիմացինին:

— Միտդ ա, միտս որ զիժ Ստեփիկօն փուկա-
ներով շալախօ խաղ արեց:

— Տօ Զարրօ, լսուեց մի ուրիշ ձայն, զնթ,
էն հոտած մսթալի ինչ արիր:

— Վա, ոնց թէ ինչ արի, հէր օխնած առ-
ջի անգամն է, որ հոտած մսթալ եմ ծախում, ծա-
խոցի ու մէկին երկու զատեցի, պարծենալով պա-

տասխանեց զարբօն:

Խօսում էին, վիճարանում, զանազան հարցեր տալիս, ուտում, խոռում ու աւելի հարբում: Նրանք խպառ մոռացան Օսէփին: Գրավներն այն աստիճանին տարացան, որ սկսեցին շալախօն ու լէզգինեկն պարել: Միքանի անզամ էլ մէջ ընդ մէջ «բրուտօժամիչ» երգեցին միասին՝ գուղուկի ձայնակցութեամբ:

— Աբա մի լէզգինեկա խփի, ուստա Պետօ, հրամայեց թամագլէն ու վերկացաւ տեղից օրօրուելով աջ ու ձախ, պատրաստուեց խաղալու:

Ուստա Պետօն սկսեց լէզգինեկան ածել: Միւսները մեծ բաւականութեամբ սկսեցին ծափահարել «տաշի, տուշի» զոռալով: Դառչօն՝ թամագլէն հարբածին վայել ձեերով՝ պարեց ու մի բուրլիանոց ուստա Պետօյի ճակատին կացրեց «շարաշ» կոշելով: Խաղացին և միքանիսները:

Քարձեալ հետեւեցին կենացներ, վիճարանութիւններ և թիշ մնաց, որ մի մեծ մուշտի կռիւ պիտի սկսուէր երկու հոգու մէջ:

— Աբա ինձ համա էլ մի լաւ շալախօ հրամայեց մի սրիշը, նա վեր թռաւ տեղից, չուխի փէշը ուսին զցեց ու սկսեց պարել: Նա պարում էր զանազան ձևակերպութիւններով, ծամածութիւններով. նրա սարսափելի լայն շարվարը շարժում էր խաղալու ժամանակ այս ու այն կողմ և լրացնում ծամածութիւնները: Նա էլ «շարաշ» տալով դու-

գուկչուն, նստեց իր տեղում: Միւս կողմից մէկը չփրեաստին զլեց, որին հետեւ գուղուկը:

Մինչև երեկոյ տեղեց քէֆը, և երբ գինու տիկերն խպառ զատարկուեցան քէլէխաւորները վեր կացան տեղերից, խումբ-խումբ փաթաթուեցին իրար վզով, գուղուկն էլ առաջներից ածելով, երգելով, բզաւելով ու աջ ու ձախ տատանուելով, յամբ բայերով մտան փազոց ու առաջ շարժուեցին:

— Օսէփ ջան, քու տօյերը գնացին քէփ անեն, յու համա գուն սի հողումը պառկեցիր, Օսէփ ջան, ողբում էր Օսէփի մայրը բարձրածայն,— զու ինձ քաղցած ու անտէր թռպեցիր, իմ աչքին լիս, քու նաղինկալին բէմուրաղ արեցիր, Օսէփ ջան:

Զուտով հեռացան քէլէխաւորները և այլ ևս նրանց ձայնները չէին լուսում: Միայն մերթ ընդ մերթ գհօլի պարբերական ուժգին հարուածն էր լուսում

Խոկ ներսում Օսէփի մայրն ու նշանածը երկար լալիս էին ու սզում



ԱՆՄԵՂ ԶՈՀ

— 2է, Էսպէս չի լինի, էս կեանք չէ, ինքն իրան խօսելով ներս մտաւ Ստեփանը.—Ախ՛, Առտաւձ, գատաստան ունի՞ս:

— Ի՞նչ է, այ մարդ, էլի շը տուեց պարտը Եզ անաստածը, դիմաւորեց նրան կինը՝ Եւան, Վրգովուելով մարդու բացականչութիւններից:

— Մարդիկ փշացել են, անխիղճ են դարձել, շունը, օձը, ձին խիստ ունին, համա մարդիկ ոչ խիղճ ունին ոչ հոգի, խօսեց ուժեղ ձայնով Ստեփանը, նստելով աթոռու վրայ:

Նրա երեսը կարմրել էր, աշքերը կատաղի արտայատութիւն էին ստացել, չրթունքները բարկութիւնից զողովում էին և բռունցքներն էլ իրանը իրանց սեղմուում, կարծես մէկին հարուածելու համար:

— Ախր՝ ի՞նչ ասեց, Ստեփան, ասա տեսնեմ է. հարցրեց Եւան մօտը կանգնելով:

— Ել ի՞նչ ասեմ, տունս խտակ քանիդեց, ասաց որ ինձ պարտ չէ ոչ մի կոպէկ, ուր մնաց թէ տասն հազար մանէթ, և եղ հերիք չէ, ին անհոգին ի՞նչ որ պարտեր է ստեղծել ինձ վրայ,

որ իբր թէ երկու հազար մանէթ ես եմ պարտք
նրան:

— Վոյ, քռունամ ես, ծնկներին զարկեց Եւան,
և քարացած մնաց. վոյ քռու հոգին դժոխքի փայ
դառնայ, Գրիգոր աղա, որ քռու էլքան հարստութեան
միջին մեր հացի փողը կտրում ես ու հլա սուտ
պարտք էլ դնում մեղ վրայ: Հախմեան տէրը էն
կրակը գցի քռու օջախը, էն լացն ու շիւանը տայ
քեզ, ոնց որ դռ մերն արիր: Քա, մարդ, դէ մի
լաւ աղմակատի տուր գործը, թող օրէնքով առնի
էլք, խորհուրդ տուեց կինը:

— Գժուել ես, ինչ է, կարծես ես Լոքան լսելք
չունեմ. ինչ տամ այդ վախկոտին, ում դէմ զանց
գտառուեմ, քաղաքի հարուստի գէմ, չը զիտես, որ
հիմի ուսումնաւորը բեթար անխիղճ է ու զճող:
Գրիգոր աղէն մէկին էրկու, իրէք կտայ ու լաւ
աղմակատ կը բռնի, էն վախտը գիփունանցս սիրիր
կը բշել տայ: Էղ մի կողմ կենայ, աղմակատին ինչ
տամ. նա խօ ձրի չի փաստաբանի մեղ համար:

— Վայ, վոյ, էս ինչ քամբախտութիւն էր, Տէր
Աստուած, բացականչեց Եւան աշքերը արտասու-
րով լցուած, և սկսեց անկողին պատրաստել:

— Ախ՝ քռու տունը քանդուի, Գրիգոր աղա,
որ իմ ճակատիս քրտինքով հալալ աշխատանքով
ձեռք բերած հացի գինը խլում ես, բառ էս
էրէսանց ով հաց կտայ, ով կը հազցնի, խօսեց
Ստեփանը ինքն իրան, ու վեր կենալով աթոռից

սկսեց սենեակում յետ ու առաջ քայլել, փոխորկող
մտքերով շրջապատուած:

Անկողինը պատրաստ էր, բայց Ստեփանի բու-
նը փախել էր. նա մի քանի ծխախոտ ծխեց և շա-
րունակ քայլում էր, մտածելով մի վերջնական ելք
գտնել: Ծխախոտը չը կարողացաւ թմրեցնել նրան,
նա պահանջեց գինի, որ մի քիչ մնացել էր շիշում.
խմելով գինին, նա գարձեալ շրջում էր յետ ու
առաջ:

Կինն արդէն պառկել էր, և քոնք նար էր
փակել նրա աշքերը: Ստեփանը բաւականին երկար
մտածելուց և բազմաթիւ հսկոցներ հանելուց յե-
տոյ, մի վերջնական վճիռ կայացրեց, որ իրան
վերջնականապէս տապալման պատճառ պիտի գառ-
նայ: — Քանի որ իդուր է արդար ճանապարհով ու
պաղատանքներով խնդիրը՝ Գրիգոր աղայից հասա-
նելիք փողը և քանի որ այլ ևս գործ չկալ քաղա-
րում, կրիպիս է. — գոնէ վրէժ առնել Գրիգոր աղա-
յից: Վաղը և եթ սպանել նրան և հետեաները ինչ
ուղում է լինի: Թող կինն էլ երեխաներն էլ գոնէ
դուռ ընկնեն, մուրալով ապրին, ինքը չի կարող
այսուհետեւ նրանց պահել:

Վերջին ծխախոտը ծխելով նա հանուեց, ճը-
րագը հանգցրեց ու պառկեց անկողինում: Քունը
թէի շատ ուշ մօտեցաւ նրան, բայց հէնց որ ընեց,
սկսեց զառանցել ու յաճախ անկապ-անկապ խօսել
երաղի մէջ շարունակ, անիծելով Գրիգոր աղային:

Բորբոքաւած ուզելի և յուզված զպացմունքների
աղղեցութեան տակ հետեւեալ օրուայ կայանալիք
իրականութիւնը նա երազի մէջ տեսաւ:

Իբր թէ երեկոյ է, Ստեփանը վերցնելով իրանց
տան սուր գանակը, հաստատ վճռականութեամբ զը-
նաց Գրիգոր աղայի մօտ: ծառան ներս չէր թող-
նում նրան. բայց նա ուժով ներս մտաւ Գրիգոր
աղայի սենեակը, որտեղ նա միայնակ նստած հաշխ
էր տեսնում:

—Գրիգոր աղա, վերջին անգամ եմ եկել րեզ
մօտ, քու Աստծու խալթեր, քու հոգու խալթեր, քու
որդիկերանց արևատրազա, խղճա մեզ, մի թողնի սո-
վամահ լինի իմ խեղճ բիւլիքաթը: Միտդ բեր իմ
հաւատարմութիւնս դէպի բեզ. իմ անխոնչ աշխա-
տանքը: Ախրը՝ իմ ապրանքի փողն ու բեզ մօտ ծա-
ռայելուս հախն եմ ուզում, որ մինչի հիմի պահե-
ցիր, աղաշում եմ, տուր պրծի:

—Ես բեզ ոչինչ պարտ չեմ, թէ պարտ եմ,
ցայց տուր վեկսիլս, թէ չէ, հլա երէկ ասեցի, որ
դու ես ինձ պարտը, չես հասկանում հայերէն, պա-
տասխանեց Գրիգոր աղան զայրանալով, որ աւելի
կառագեցրեց թշուառ Ստեփանին:

—Ախր՝, էս ինչ աշխարհ է, Գրիգոր աղա,
որ աւները չունեարի վերջին թիրէն է խլում, որ
տէրը հաւատարիմ բանւորի վարձն է կարում, զո-
չեց Ստեփանը ձեռքը տանելով գրպանը:

—Հիմի էպաէս է, աղպէր, ի՞նչ կարող ես անել:

—Բաս չես տալիս իմ փողերս, քաղցած մեռ-
նենք էլի՛, տնով տեղով կորչենք էլի՛, զոռաց Ստե-
փանը բարկութեան ծայրայեղ աստիճանին հասած:

—Ես բեկ ասում եմ ոչ ինչ պարտ չեմ, զնա
ուադ եղիր, մեռնում էք, մեռէք, սատկում էք,
սատկէք . . .

—Քեզ կը սատկեցնեմ, այ անհոգի շուն, զո-
ռաց Ստեփանը և յարձակուեց Գրիգոր աղայի վրայ,
որ չափազանց պարարտ-հաստափոր ու դանդաղա-
շարժ լինելուց չը կարողացաւ խուսափել Ստեփանի
յարձակումից:

Բայց գանակը զրպանի պատուածքից ճանա-
պարհին վայր էր ընկել: Ստեփանը ստիպուած ե-
ղաւ ձեռքերով նրան խեղդել . . .

Բայց սասկալի երազը սոսկալի իրական հետե-
ւանք ունեցաւ: Խելագարութեան աստիճանին հա-
սած Ստեփանը քնի մէջ՝ երազի աղղեցութեան
տակ բռնեց անկողնում քնած կնոջ կոկորդից ու
սկսեց խեղդել . . . Նա մատները սեղմում էր
գժրախտ զոհի կոկորդը և խոխուացնում:

—Այսպէս շանսատակ եղիր, անխողիմ, կըկնում
էք նա և աւելի ուժով սեղմում էր կնոջ կոկորդը:

Այսպէս յանկարծակի կերպով կատարուեց այդ
բանը, որ խեղճ կինը չկարողացաւ ազատուել նրա
ճանեկերից:

Պարձ միջոցում ինեղբամահ եղաւ կինը . . .
Եւ Ստեփանը հետզհետէ սթափուելով խտերիկայից,

տեսաւ խեղդուած կնոջը, որի լեզուն կախուել էր բերանից, աշքերը արինով լցուած՝ գուրս էին թը-
ռել իրանց վանդակներից և գոյնը սաստիկ կապ-
տել էր:

Նա ապշած մնաց: Արդեօք սա էլ մի ուրիշ
երազ չէ: Նա շօշափեց մեռածի մարմինը, որ դեռ
տաք էր. ոչ, երազ չէ. գուցէ ֆրիգոր աղայի կող-
մից մարդիկ են մտել ներս և խեղել կնոջը: Բայց
տեսաւ, որ գոները պինդ փակ են: Նա նայեց իր
ձեռներին և տեսաւ, որ մատները արիւնոտ են,
շապիկն էլ պատռուտել է, որ պաշտպանուելիս
դժբախտ կինը ձեռքերը այս ու այն կողմ հետելիս
էր պատռուտել:

Նա հասկացաւ ամեն ինչ

Նա ելաւ, հազաւ շրմերը: Թէ ինչ անել, ինքն
էլ շը գիտէր: Արդէն լոյս էր, մարդիկ շտապում էին
գործի: Յանկարծ զարթնեց իր 7 տարեկան երե-
խան, ըստ սովորականի վաղեց մօր ծոցը մտնելու,
բայց աւաղ տեսաւ մօրը այլանդակ ան-
շնչացած Նա սկսեց աղազակ բարձրացնել.
Լալ, ճշալ: Միւս երեխաներն էլ զարթնեցին նրա
գոռոցից և տեսնելով մեռած մօրը, բոլորը միա-
ձայն սկսեցին լալ և արտասուել

Դժբախտացած Ստեփանը բոլորովին կորցրած
իրան՝ շը գիտէր ինչ անել: Նրա լեզուն կապուել
էր. ուզեղը դադարել մտածելուց: Երեխաների ա-
զազակների վրայ ներս թափուեցան հարկանները,

անցորդները և ուրիշները, ու տեսնելով այդ տեսա-
քանը, եղրակացրին, որ Ստեփանը դիտաւորեալ
սպանել է կնոջը. իսկոյն ոստիկանատանը իմաց
տուին, որ անմիջապէս եկան պլիստաւը, քննիչը,
ոստիկան զինւորներ ու ձերբակալեցին Ստեփանին:

Քննիչը երկար բննելուց յետոյ, երկար այս
ու այն ենթագրութիւններ անելուց յետոյ, կազմեց
հետեւալ արձանագրութիւնը: — «Ապրիլի 25-ի գի-
շերը X բազարի բնակիչ Ստեփան Մաճառեանը
«անյայտ պատճառով» — գուցէ ամուսնական հաւա-
«տարմութեան վրայ կասկածելով, ձեռներով խեղ-
«դամահ է արել կնոջը՝ եւա Մաճառեանին: Այդ բա-
«նը հաստատում են հետեւալ հանգամանքները: Ա-
«զին՝ Պոները բոլորովին փակ են եղել, երբ հարեւան-
«ները լսելով ներսից աղեկտուր լաց ու ճիշ, ներս
«են շտապել և գոները յետոյ են բացուել և ներսը
«բացի Ստեփան Մաճառեանից ոչ որ չի եղել: Եր-
«կրորդ՝ Ստեփան Մաճառեանի ձեռները արիւնով
«են ծածկուած, և շապիկը պատառուուած է, որ
«առաջ է եկել սպանուողի ինքնապաշտպանութիւնից.
«Երրորդ՝ կոկորդի վրայ մատների հետքեր կան, որ
«ապացոյց են ձեռներով խեղդամահ անելուն, վկա-
«ներ են և այն»

Այնուհետեւ զիակը ուղարկեցին անատօմիական
հիւանդանոց, իսկ Ստեփանին՝ մի քանի հարուած
տալով առաջ վարեցին գէպի բանտ

Նրա երեխաները լալիս էին, ովրում, վազում

իրանց մօր դիակի յետեից Տանը ոչ ոք չը
մնաց: Ստեփանի օջախի ծուխն իսպառ մարեցաւ . . .
Դժբախոտ Ստեփանը հետդհետէ սթափուելով
թմարծ դրութիւնից, զգաց, լմբռնեց շուրջը կա-
տարող դրաման:

— Գրիգոր աղան է պատճառ այս բոլոր դը-
րախտութիւների, վինվնթաց նա. և նա այժմ կո-
րախանայ, որ լոէ այս բոլորը: «Յաւիտեանս յաւի-
տենից բանգուեց օջախս, երեխէքս քաղցած կը մեռ-
նեն, լաւ է, որ բանի չեն կաշկանդել ինձ իսպառ,
Գրիգոր աղայի դատաստանը տեսնեմ:

Այս ասելով, նա յանկարծ բօթելով ոստիկան-
ներին, սկսեց արագ վագել դէպի Գրիգոր աղայի
տունը:

— Փախաւ, փախաւ, բռնեցէք, մարդասպանը
փախաւ, զոռացին շորս կողմից և նրա յետեից
ընկան:

Հուտով յաջողուեց բռնել Ստեփանին և նրա
վճիռն անիրագործելի մնաց մինչէ վերջ: 2կար մի
բարի մարդ, որ պաշտպանէք թշուառ Ստեփանին,
պարզել տար թիւրիմացութիւնը:

Այժմ աւելի խիստ ծեծելով տարան նրան, ուր
հարկն է, և մեղադրանաց ակտի մէջ մտաւ այն
կէտն էլ, որ նա փորձեց փախչել իշխանութեան
ձեռից:


Երկար, շատ երկար, կեանքի աննպաստ պայ-
մաններին գոհ դարձած Ստեփանին շարչարելուց

յետոյ վճռեցին նրան՝ իրեւ մարդասպանի—աքսոր,
տաժանակիր աշխատանքները 20 տարի ժամանա-
կով

Նրա խեղճ ու փոքրիկ երեխաները մնացին
գոնէ-գուռ և անխմամ

Իսկ Գրիգոր աղան լսելով այդ բանը, սկզբում
զգացուեց. իսկ յետոյ ուրախացաւ, որ աղատուեց
պարտատիրոջից, նա շարունակեց իր երջանիկ ապ-
րելը, շարունակելով խարել ու զրկել մարդկանց....

1903 թիւ:



ՍԻՐՈՅ ՅԱՐՈՒԹԻՒՆ

Զատիկի կիւրակի օր է: Ամբողջ Քրիստոնեայ
աշխարհը՝ հարուստ թէ ազգատ Յարութեան տօնի
զգացմանքով լցուած, սեղանի շուրջը բոլորած ցըն-
ծում են և ուրախանում:

Ծովեղերեայ Օ . . . քաղաքի տներից մէկում
լսելի էին երիտասարդների սպեորուած ուռաներ և
ցնծութեան աղաղակներ: Մի փոքրիկ բայց շրեղ
սենեակում կար խնճոյք, որի հիւրերը բացառապէս
կազմում էին ուսանողներ, թուով ինն հոգի: Նրան-
ցից երերը այս տարի աւարտել էին համալսարանն
ու գնալու էին հայրենիք, այդ պատճառով էլ սար-
քելէին այս ընկերական խնճոյքը, վերջին զատիկը ու-
րախ և անմոռաց դարձնելու համար այն երեք ա-
ւարտող ընկերների սրտերում:

Տան մէջ չկար մատակարարուհի—այլ ամեն
մէկն առանց զլանալու կատարում էր թէ հիւրի
թէ մատակարարի պաշտօն: Մսից պատրաստած
երկու տեսակ կերակուր, մի երկու շիշ էլ սպիտակ
գինի կազմում էին փոքրիկ սեղանի լիութիւնը: 2ը
նայած զինու և ուտելեղէնի սակաւութեան, նրանք
անհամեմատ ուրախ էին, զուարժ խօսում, ծիծա-

զում և ճառաբանում էին, կարծես, իւլաբանչիւրը նրանցից խմած լինէր մի քանի շիշ գինի.—Նրանք արբած էին ընկերական անկեղծ սիրով և կեանքի մէջ մտնելու խոհերով

—Խմեցէր, պարոնայք, թսդ ուրախ անցնի այս Զատիկը, որպէսզի աւելի խոր տպաւորուելով ձեր լիշողութեան մէջ, մտարերէր ձեր ուսանողական կեանքը, ձեր ընկերներին—այսինքն մեղ, գոչեց բարձր ձայնով մի ցածրահասակ սեահեր ուսանող, նայելով անդրանիկ ուսանողներին:

—Կեցցէ երիտասարդութիւն, ուսանա ա

—Արտէմ, ինչն ես տխուր, լուռ. միժէ քեզ հաճելի չէ այս խնձոյրը, գիմեց նոյն ուսանողը դիմացը նսաած գեղատեսիլ ուսանողին, որ այս շրջանաւարերից մէկն էր լինելու:

—Ոչ, բարեկամ, ես տխուր չեմ, ապագայի մտքերն են շրջապատել ինձ, պատասխանեց Արտէմ Լուսնակեանը ժպտելով ու դատարկելով իւր գինու կիսատ բաժակը:

Երիտասարդները խօսում էին, վիճաբանում, կատակներ անում, երգում ու պալում ջութակի ներդաշնակութեամբ, որ նուազում էր նրանցից մէկը:

Բաւական երկար ժամանակ նրանք զուարձացնեւ: Արևն արգէն իջնում էր իր գիշերնոցը:

Ահա ոտքի կանգնեց շրջանաւարտ Արտէմ Լուսնակեանը և սկսեց ճառել:

Նա խօսում էր և հետղհետէ ոգիսրուում: Խօս-

բերն ու մտքերը յորդառատ գուրս էին հոնում նրա բերանից: Երեսում էր, որ նրա ամեն մի խօսքը գուրս էր զալիս նրա երիտասարդ սրտից, անխոռով հոգու խորքերից: Նա խրախուսում էր ընկերներին, տալով ապագայի համար խորհութիւններ: Պատկերացնում էր ժամանակակից երիտասարդութիւնը, քը նուում էր նրա ձգտումները, շեշտելով, որ մեծամասնութեան ձգտումն է զատարկ զիպլօմներ ըստանալը, և նրանք առանց մտաւոր պաշարի՝ ստանալով զիպլօմները, մտնում են կեանք և գործում միայն իրանց անձնական շահերի համար: Լուսնակեանը բարեմախութեց և ցանկացաւ, որ իրանը լինեն լաւ մարգիկ և գործեն յանուն գաղափարի հաստրակութեան համար:

—Կեցցէ Լուսնակեան, կեցցէ, ուռուան, թընդաց սենեկակը նրա ճառից յետոյ:

Մի փոքր յետոյ նա հրաժեշտ տալով ընկերներին, գուրս ելաւ ու զիմեց իր բնակաբանը մի փոքր հանգստանալու:

Իսկ խնձոյրը շարունակուեց մինչև ուշ գիշեր:

Արտէմ Լուսնակեանը մի խելզ բնատանիրի զաւակ էր, հայրը՝ երրեմնապէս գործունեայ գործակատար առետրական ասպարէզում, այժմ ծերացած զառամեալ տանը նստած էր և օրէցօր սպասում էր մահուան: Մայրն էլ արգէն բաւականին ծէր էր և հազիւ էր կարողանում կատարել անսային աշխատան-

ըլ: Զը նայած, որ այս երեքն էին տանը անդամները, բայց և այնպէս շատ դժուարութեամբ էին հայթայթում իրանց օրական սպարէնը, նրանց օգնում էր մի հարուստ ազգական, որ և Արտէմի զիմնապիսի վարձն էր վճարում:

Արտէմը վերջին դասարանումն էր երր սիրահարուեց մի օրիորդի հետ, չոփիփսիմէ Կուռօնեան անունով, որ նոր էր աւարտել կրօյկան: Նա այն աստիճանի տարուեց այս օրիորդով, որ չը նայելով իր ընդունակութեանը և յառաջադէմ լինելուն, նախընթաց բոլոր դասարաններում, վերջին դասարանը շատ դժուարութեամբ աւարտեց: Ըստառվ նրանք յայտնեցին միմիանց իրար սէրը և խօսք տուին ամուսնանալու: Արտէմը որ վիշեր ցերեկ երազում էր բարձրագոյն գպարց մտնելու մասին, այժմ մոռացաւ ուսումը և ամեն ինչ, ու յափշտակուեց չոփիփմէով: Բոլորեց մի ամրող տարի Արտէմի գիմնադիան աւարտման օրից, և նա համարելով իրան երջանիկ մարդ, սկսեց հոգալ ամուսնութեան մասին: Բայց հետզհետէ նանկատեց, որ չոփիփսիմէն չի կարող իր սիրոյ առարկան լինել . . . չոփիփմէն հինց մանեկութեան հասակից վատ սւզդութիւն էր ստացել: Նրա ծնողները, վարժուհիները և բարեկամները լինելով տղիւտ, շէին կարողացել փոքրիկ չոփիփմէի մէջ ներշնչել բարոյականութեան սկզբունքը: Եւ չոփիփսիմէն գիշեր-ցերեկ ընկնելով դպաների հետ, սկզբում պատանեկական տնմել սի-

րաբանութիւներով էր զբաղւում, բայց յետոյ «հանարը չանաք դարձաւ ու»—և չոփիփսիմէն դարձաւ լկու տղաների զրւարձութեան առարկայ . . . չանգիպելով Արտէմ Լուսնակեանին նա զրաւուեց նրա գեղեցկութեամբ և ըստ իւր ընաւորութեան ոկտեց սիրել ու սիրուիլ նրա հետ:

Նա Արտէմ Լուսնակեանի հետ էլ այսպէս էր զուարձանում, ինչպէս ուրիշ տղաների հետ, բայց և այնպէս զգում էր, որ այս երիտասարդը շատ բարձր էր իր «սիրելիներից», որ աղնիւ էր ու խելօք, որ սա սիրում էր իրան՝ չոփիփսիմէն անկեղծ սիրով, և առա հինց այս աղնիւ յատկութեանց առաջ չոփիփսիմէն ակամայից ընկճում էր ու պատկառում Արտէմից, ցոյց տալով իրան՝ իւր բարոյական և պարկեշտ սիրող:

Վերջապէս չոփիփսիմէն արգին կշտացաւ նրանից, արգին մի տարուայ բաղցր զրոյցները, սիրային համբոյները և ամենօրեայ տեսակցութիւնները յագեցրին չոփիփսիմէի հաճոյքներին: Եւ, երբ զանազան աննապաստ լուրերից գրգռւած սկսեց հետեւ իր սիրած չոփիփսիմէն, և մի օր բռնեց նրան մի այլ երիտասարդի հետ համբուրուելիս,—այդպիսով պարզուեց նրա համար, որ չոփիփսիմէն միայն կրօստ ու կեղծ սիրով էր կապուած իր հետ մինչեայժմ: Այնուհետեւ նա փոխանակ գրէժինդիր լինելու կուռօնեանից, զսպեց իրան և բռնօրովին հանգնելով իր սրտի սէրը գէպի անարժան չոփիփսիմէն

ու խզելով նրա հետ ունեցած բոլոր կապերը, աշնան սկզբին ճանապարհուեց գէպի Ռուսաստան ուսումը շարունակելու, նոյն իր ազգականի հաշւով։ Իսկ օրիորդ Հռիփսիմէ Կուռօնեանը միքանի ամիս յետոյ անյայտացաւ մի երիտասարդի հետ, և ոչ սքչմացաւ թէ մը գնաց նա

Այն օրից անցել էին հինգ բոլորակ տարիներ, և այժմ Արտէմ Լուսնակեանը բոլորովին մոռացած իր առաջին սիրասթափութիւնը, աւարտում էր համարաբանը, և նոր իդէալներով ոգերուած, վերադառնում էր հայրենիք գործելու համար։

Բայց գեռ վազ էր, Լուսնակեանն իրան մի փոքր վատ էր զգում և կուրծը՝ կարծես դժուարութեամբ էր ելեէջում։ Նա մտածեց գնալ ծովափ և մի փոքր մարուր օդ չնշել այնտեղ։ Նա զլիկորքալերը ուզգեց գէպի ծավափը և հասնելով այնտեղ, քաղաքից մի րիշ դուրս հստեց ծովափին ու սկսեց զիտել անսահման ծովը։ Արել արդէն մայր էր մըտել և արշալոյսը ալ-կարմիր բոցավառում էր, իր այդ հրաշալի տեսարանը ցոլացնելով ծովի խորութեան մէջ, սրտեղ, կարծես ջուրը հրդեհուում էր։

Թռչունները երամ-երամ բարձրաձայն ծվծվալով ու կոկուալով լոգում էին ծովի վրայ՝ օդի մէջ։ Երբեմն էլ երեկոյեան զով քամին փշում էր և ծովի խաղաղ կապուտակ մակերեսոյթի վրայ ցոլացնում փորրիկ—շերտաւոր ալիքներ, սրոնք մէկը միւսին

հրելով առաջ էին խաղում գէպի ծովի խսրաքերը և անյայտանում

Նստած էր Լուսնակեանը ափի մօտ ու լուս նայում էր բնութեան այդ գեղեցիկ տեսարանին։ Նրան շրջապատել էին զանապան մտքեր ու անուրջներ, որոնք հետզհետէ ալելոծում էին նրա զգացմանըները։ Ակամայից նրա երիտակյութեան մէջ զարթեցան տարիներ առաջ պատահած սիրային անցրերը, իր անկեղծ սէրը գէպի Հռիփսիմէ Կուռօնեանը, նրա քաղցր համբոյները, ապա սիրալսթափուելը, ուսումը շարունակելը և վերջապէս երեւակյում էր իր ապագան, ծրագիրներ էր մշակում գործելու համար։

Այդ յիշովութիւնները ճնշում էին նրա հոգին և յաճախ կնճիռներ էին երեան գալիս նրա բաց ճակատի վրայ։ Երբեմն մի մի հոգւոց էր դուրս թռչում նրա մատաղ կրծքի խսրաքից։

Խաւարը սաստկանում էր և շրջակայրը զառնում էր անտեսանելի։ Ծովը աստիճանաբար ընդունում էր սկ զոյն, որ կարծես, մի ընդարձակ սաւան ձգուած լինէր լեռների ստորոտում։ Արտէմը չէր նկատում գիշերուայ մօտենալը. նա գեռ խորասուզուած էր մտքերի ու ցնորբների մէջ։ Քամին միայն սթափեցրեց նրան, որ հետզհետէ ուժեղանում էր և ծովի մէջ մեծ ալիքներ կազմում, որոնք սկսում էին որոտաձայն մոնշալ ու զարկուի ափերին, կարծես ուզում էին դուրս գալ ափերից ու

կլանել Լուսանկեանին։ Մի սարսուռ անցաւ նրա
ամբողջ մարմնով և զգաց, որ ցուրտ է, նայեց
շուրջը, տեսաւ, որ արդէն զիշեր է, նա բարձրա-
ցաւ նոտած տեղից և ուղղուեց դէպի տուն։

Յանկարծ մի խուլ շշուկ և մարդկային ձայն
հասաւ նրա ականջներին, նա ցնցնուեց, նայեց իր
շուրջը, բայց ոչինչ չ'նկատեց խաւարի մէջ. «Ալիք-
ներն կատաղել են», մտածեց ու շարունակեց բայ-
լել։ Բայց գարձեալ նրա ականջներին հասաւ մի
ձայն, որ նման էր կանացի հեկեկանիքին։ Լուսնա-
կեանը կանգնեց, չունչը ներս բաշեց և դիտելով
շուրջը՝ սկսեց որոշել քամաւ սռնոցի հետ եկող այդ
խորհրդաւոր ձայնը։

Նա կարողացաւ որոշ լսել կանացի քնքոյց
հեծկոտոց ու հոգւոցներ. «Անպատճառ մի եղեբա-
կան գաղտնիք կար այդ տարաժամին, ծովի ափում։
Նա գորոշութեամբ առաջ շարժուեց այն կողմ, որ-
տեղից լսում էր այդ ձայնը։ Եւ ինչ, նա խաւա-
րի մէջ նկատեց մի ստուեր, որ մերթ մօտենում
էր ծովին, մերթ մի քանի բայլ հեռանում ու շո-
րում գետնի վրայ։ Լուսնակեանը բաւականին մօ-
տեցաւ նրան որոշակի տեսաւ, որ այդ կին էր։ Նա
մի քարի յետեռում կուչ գալով, սկսեց ականջ դնել
նրա կցկոտը արտասանութիւներին ու դիտել շար-
ժումները։

Մթնում որոշ կերպով չէր նկատում կնոջ կեր-
պարանը, այլ լսելի էր միայն, որ նա լալիս էր

աղէկտուր, հեկեկում էր, զարկում կրծքին ու լիչ
որ մրմնջում։ Ահա նա վեր կացաւ, մօտեցաւ զրին
և երեսը խաշակներելով ուղեց նետուել ծովը, որ
խկոյն Լուսնակեանը մօտ վագեց դէպի նա, բռնեց
նրա բազուկներից ու յետ քաշեց, ասելով.

— Սպասեցէք, քոյրիկ, յանցանք մի գործէք։

— Թողէք, թողէք, ով էք դուք, որ խանգա-
րեցիք՝ գտնել իմ հանգիստը այս ալիքների մէջ.
թողէք ինձ, խնդրում եմ, հեռացէք այս տեղից, —
խօսեց թոյլ ձայնով կինը և աշխատեց դուրս պլրծ-
նել երիտասարդի ձեռքերից։

— Ոչ, ոչ, դուք իրաւոնք չտնիք ձեր կեանիքը
սպանելու։

— Ունիմ իրաւոնք իմ սեպհական անձիս վրայ,
թողէք, աղաչում եմ ձեզ։

— եկէք, քոյրիկ, եկէք, գնանք այստեղից, մի
փոքր հանգստացէք, դուք յուզուած էք սաստիկ,
տուաց Լուսնակեանը և առաջնորդեց դէպի տուն։

— Թողէք, իգուր մի երկարացնէք տառապեալ
կեանքս, մի կրկնապատկէք հոգուս տանջանքները,
մեղք եմ, խզացէք ինձ, թող վագօրօք հանգստա-
նամ ծովի յատակում։

— Հանգստացէք, հանգստացէք, կրկնում էք ե-
րիտասարդը և նրան առաջ բաշում։

— Միենոյն է, ես կորած եմ, իմ վերջո այս-
տեղ է, այսօր չը լինի, վաղը կընկնեմ չուրը, ծո-
վը վախչելու չէ այստեղից և պատրաստ է ինձ

Նմաններին լնկունել էր գիրկը:

Լուսնակեանը այլս չը խօսեց, տեսնելով, որ թշուառ աղջիկը զառանցանքների մէջ էր լնկում և չերմը սաստկանում էր. մի կերպ մինչև քաղաքի ծայրը հասցրեց նրան, նստացրեց կառք ու տարաւ իր բնակարանը միառժամանակ պատսպարելու նըրան և ապա որիէ կարգադրութիւն անելու:

—Թողէք ես արգէն կորած եմ միայն մահը կը մարքէ ինձ մեզբերից գուրս էին թռչում զառանցողի քնրոյց շրմունքներից:

Երիտասարդը նստած նրա մօտ, հետաքրրութեամբ գիտում էր այդ անյայտ ինոչ գէմքը և ուշագրութեամբ լուսմ արտասանած բառերը, ուղենայով մի ամփոփ գաղափար կազմել այդ թշուառ ինոչ անցեալի մասին:

Ճրագի լոյսը ընկնում էր մահճակալի վրայ պառկած ինոչ գալիքացած երեսի վրայ և արտացոլում. նա՝ այդ կինը՝ մի նիհար մի միջահասակ աղջիկ էր: Տարիքը բասաներերից աւելի չէին կարող լինել: Երեսի գոյնը սպիտակաղեղին, որպէս մաքուր մոմ. շրմունքները բարակ և ալ-կարմիր, այտերը նիհարած ու փոսն ընկած, իսկ աշքերն աւելի խորն էին սեղմուել իրանց վանդակների մէջ: Բայց գէմքի կանոնաւոր գծագրութիւնը ու նըրութիւնը, շականակագոյն խիտ մագերը, որոնք այժմ անխնամ և կեկտաս բրբսուել էին ու թափուել այս

ու այն կողմ, վկայում էին, որ այդ շարքաշ կինը երբեմնապէս եղել է զեղեցկուհի և միայն կեանքի բովի մէջ զանազան հանգամանիքների փոփոխութեանց ներբոյ, անցել էր նրա զեղեցկութիւնը և մաշուել էր այդ քնրոյց կազմուածքը:

«Ընպատճառ մի մեծ և խորհրդաւոր գաղտնիք կայ այս աղջկայ կեանքի մէջ»—մտածում էր Արտէմ Լուսնակեանը, անթարթ աչքերով նայելով նրա դալուկ բայց աշխոյժ, գէմքին:

Գիշերից բաւական անց էր: Լուսնակեանի քունը բոլորովին փախել էր նրանից: Նա միայն հետաքրրուած էր այդ տեսարանով, որ բոլորովին անսպասելի էր: Յերեկուայ ուրախութիւնը անսպասելի կերպով փոխարինուեց ներկայ թախիծով:

Ցանկարծ հիւանդը բացեց աչքերը, նայեց իր շուրջը ասլուշի հայեացքով ու սկսեց զնել երիտասարդին, սենեակը, ապա նստեց մահճակալի վրա, ու հարցրեց լսելի ձայնով.

—Ես սրտեղ եմ ես:

Նա հետպհետէ աւելի սթափուելով նկատեց, որ գտնուում է իրան անծանօթ, մի օտար մարդու մօտ, ուրիշի մահճակալի վրայ և տեսնելով, որ կուրծքը կիսով չափ բաց է, մազերն անկանոն թափթափուած ուսերի վրայ, ամաշեց ու ինըն իրան ուղղուեց, բարակ կարմիրը պատեց նրա այտերին:

—Ոչինչ, օրիորդ միք վախենալ, միք ամաչիլ,

գուք ձեր բարեկամի տանն էք գտնեռում, հանդարտացրից Արտէմը կարեկցաբար նայելով նրա աշրերին:

Բայց որքան կրակոտ էք և աշխոյժ այդ աղջլ-կայ հայեացը, նրանց մէջ կար ապրելու տեհնչանք:

Երիտասարդը ցնցուելով այդ հայեացը, զլու-խը դարձեց միւս կազմը:

—Այս ինչու եմ եկել այստեղ, երբ եմ եկել, հացըց աղջիկը քնքոյց ձայնով:

Երեկոյեան գուք զբոնում էիք ծովափում, յանկարծ վատ զգացիք ձեզ և ես կառքով բերեցի այստեղ իմ բնակարանը, որտինետե ձեր տունը չը գիտեմ:

Մի քանի վարկեան լուռ մնաց աղջիկը և ու-ղիղ նայելով Արտէմի երեսին, բացականչեց վրդով-ուած.

—Այս, յիշեցի, բայց ինչու չը թողիք ինձ հանգստանալ ծովի խորքում, գուք ոչ թէ բարութիւն արիք ինձ, այլ շարութիւն:

Երանի զիտենամ, թէ այն ինչ մեծ վիշտ է, որ վաղաժամ պատել է ձեր անմեղ սրտին ու թունտուում է . . .

—Ես . . . ես մի կորած արարած եմ . . . յանկարծ հեկեկաց նա և ձեռքերով ծածկեց երեսը:

Աշբերը խոշոր կաթիներով դրւոց էք ցայտում նրա աշքերից և գլորուելով այտերի վրայից, թափ-ում էք գիրկը: Նա լալիս էք և հեկեկում, և այդ լացը կարծես, թեթեացնում էք նրա սրտին պա-

տած վիշտը:

«Խեղճ աղջիկ, եարաբ սիրել է եւ դաւաճանիլ, եարաբ խաբուել է մի անաղին տղամարդուց, որ գուցէ բարյապէս այլանդակել է ու փախել եա-րաբ . . .» և այսպիսի շատ ենթագրավութիւններ են ծագում Լուսնակեանի մէջ: Նրա սիրան էլ յուզում էք հետզհետէ և նա ցանկութիւն էք զգում աղջկայ ցաւին կից լինել, լալ, բայց զսպում էք իրան: Նա ուզում էք միսիթարել այդ թշուառին, չորացնել նրա արցունքները, բայց չը գիտէր ինչպէս, ինչ ատէր, քանի որ բոլորովին ծանօթ չէր այդ աղջլ-կայ զիտովին անցածի հետ, տեղեակ չէր նրա յու-սահատութեան ու ծովն ընկնելու պատճառներին:

—Եթէ զիտենայիք, աղինիւ երիտասարդ, թէ ավ է այս բոպէիս ձեր սենեակում նստած, ինչպի-սի մի անարժան աղջկայ էք պատսպարել . . . եթէ զիտէնայիք, գուք ինքներդ ծովը կը նետէիք, խունց նա սրերելով աշքերը դէրայի փէշերով:

—Ընկածին միշտ պէտք է օգնել և բարձրացը-նել, —բայց չէ կարելի, որ պատմէք ինձ ձեր մասին:

—Ո՞չ, շատ ծանը է ինձ համար յիշել իմ անցեալը, պատմել ամեն ինչ, ասաց նա և կրկին լաց եղաւ:

—Ոչինչ, օբիորդ, մի թագնելը վէրքերը, որ բուժող լինի. Իմ կարողացածի շափ ես կ'օգնեմ ձեզ բարյապէս և թէ նիւթապէս:

Աղջիկն սկզբում դժուարացաւ հաւատ ընծայել

այդ երիտասարդին, բայց մի ընդհանուր հայեացք ձգեց նրա երեսին, և կարծես հասկացաւ, որ զիմացինը իրօք աղնիւ տղայ է. ապա սրբեց արցունքը, ուղիղ նստեց մահճակալի վրայ, մաքրեց կոկորդը և սկսեց պատմել կանացի վշտարեկ ձայնով:

— Ես թիֆլիսեցի հայ ըրբորդ եմ: Ծնողներիս տիփութաան և անտարբերութեան պատճառավ ես շստացայ մի լաւ գաստիարակութիւն: Դեռ մանուկ հասակում ընկնում էի տղաների հետ, սիրում էի բոլորի հետ գլու ու դէն ընկնել, զրոսնել, մտնել մութ խորշեր, համբուրուել, խարել մէկին և անցնել միւսին: Այդ սկզբնական անմեղ յանցանիքները հնադիտէ արմատացան իմ մէջ և ես մեծ հասակում էր շաբունակեցի սիրաբանութիւնները թողնելով ընթերցանութիւնն ու լուրջ զբազմութեները: Այդ ժամանակներում ինձ վրայ սիրահարուեց մի զիմնազիաւարտ աղնիւ երիտասարդ, որ չը դիտենալով իմ ներքին աշխարհը, սիրում էր իդէալական սիրով, պաշտում էր ինձ, բայց ես նրան էլ խարհցի

Լացը խելպեց աղջկայ կոկորդը և նա կանգ առաւ: Երիում էր, որ այն երիտասարդի աղիւութիւնն ու սէրը ապազայում շատ թանգ էր զնահատել իր համար, որից, դժբախտարար այժմ զուրկ էր:

— Այս, նա, այն աղնիւ երիտասարդը, ինձ սիրում էր, բայց ես առօրեայ սիրով էի կապուած

նրա հետ: Ուզում էի սիրել նրան, նուիրել նրան իմ սիրտը, բայց ափսոս, որ սիրտս վշացել էր, նեխուել էր. իսկ թէ նվ էր մեզաւոր, այժմ էլ չեմ կարողանում վճռել այդ հարցը: Վերջ ի վերջոյ նա ինձ բռնեց դաւաճանութեան բովէին ու հեռացաւ ինձնից. և մինչեւ օրս էլ զգիտեմ ուրբ: Ես էլ նրանից յետոյ միբանի ամիս շատ միամիտ տպաների գայթակղեցնելուց յետոյ, սթափուեցայ, զգացի իմ սխալը, բայց ուշ էր . . . Սրգէն ամբողջ քաղաքը զիտէր, ճանաչում էր ինձ, և ես նկատում էի, որ բոլորն էլ վատ աշբով էին նայում ինձ, խորշում էին ինձանից . . . Եւ ես վճռեցի հեռանալ այն տեղից, որտեղ որ ես, չը զիտեմ ինչու, շեկուեցի ուղիղ ճանապարհից . . . Գեացի օտար քաղաքներ, մըտայ տների մէջ ծառայութեան իրր կար անող, երեխաների սկանոզ, լուսաց անող . . . Ս . . . քաղաքում ինձ սկսեց հետեւել մի երիտասարդ, որ հաշուափահ էր մի առետրական տան մէջ: Երկար հետեւելուց յետոյ նա ծանօթացաւ ինձ հետ, ցոյց տուեց իրան աղնիւ ոմն, համոզեց ինձ իր հետ ապրել և յետոյ ամուսնանալ միասին: Ես կնոջ յատուկ բնաւորութեամբ շտատ համոզուեցի. սակայն մի օր պարմնը տեղափոխուեց քաղաքից առանց ինձ յայտելու: Ես անցայ Մ . . . քաղաքը, այդտեղ էլ մի ուսանող ինձ հրապուրեց իր խոռքերով և յետոյ, ալս, էլ ինչ ասեմ . . . էլ ինչպէս պատմեմ . . .

Արտէմ Լուսնակեանի գէմքը հետզհետէ խոժոռանում էր. Նրա հեղ ճակատի վրայ մէկ-մէկի յետեից երեան եկան կնճիռներ, որ մոայլեցրին նրա պայծառ երեսը, աշքերը մի տեսակ տենդային արտայայտութիւն ստացան և հայեացը դարձաւ կը-րակոտ. սիրտը սկսեց արագ թրթռալ, որպէս մի մարդու, երբ տեսնում է կատաղի թշնամուն և լը-սում նրա կատաղեցնող խօսքերը:

Ինչու այսպէս այլալուեց երիտասարդը, արգեօք այն բանի գէմ, որ միքանի ստոր մարդիկ օգտուել էին այս մոլորած աղջկայ սխալմունքից և սոնտատակ արել նրա պատիւը, թէ անցեալ հին-հին դառն յիշովութիւններ արթնացան նրա մէջ այդ գժրախտ աղջկայ յուգիշ պատմութիւնից:

Սղջիկը նկատում էր երիտասարդի փոփոխութիւնը և այդ ընդունելով աղնիւ սրտի արդար բարկութիւն,—մարդկային վիճակի կործանիչ ելեէջների գէմ, աւելի խրախուսում էր և պատմութիւնը շարունակում. աւելի համարձակ, կարծես աշխատում էր, որ զոնէ կեանքը հանդցնելուց առաջ թտիել իր սրտին ծանրացած վշտերն ու տառապանքները մի այնպիսի երիտասարդի առաջ, որին՝ իր թափառական ու փախստական կեանքի ընթացքում առաջին անգամ հանդիպեց, որպէս բարոյական աղնուասիրտ մարդ:

— Այնտեղից խելացնոր թափառաշրջիկի նման եկայ այս բաղարը, շարունակեց նա մազերը ուղ-

գելով. շատ ժամանակ չէ անցել, ընդամենը հաղիս երեք ամիս; Ճանապարհին՝ երկաթուղու մէջ ծանօթացաւ ինձ հետ մի անձնաւորութիւն, որ իրան ցոյց տուեց մի լուրջ, համեստ մարդ: Նա հետարբրուեց ինձանով, լսեց իմ կեանքի տիսուր արկածները, ապա խոստացաւ օգնել ինձ, բժշկել ջըղային հիւանդութիւնից, որ ստացել էի չափազանց վատ պայմաններից, յետոյ ինձ հետ ամուսնանալ: Ես դարձեալ հաւատացի նրան (և ստիպուած էի հաւատալ, որովհետև զնում էի մի անծանօթ քաղաք, որտեղ ինձ չուտ կը խաբէին): Ես չ'մացայ, թէ նա իրօք ինչ սպաշտոն ունէր կամ թէ ումից էր փող ստանում, միայն այնքան հասկացայ, որ նա մեծ գործեր ունէր, շատ փող էր ընկնում ձեռքը: Երեք ամիս նրա հաւատարմութեամբ և անձնազոհութեամբ ծառայեցի իրքե. Նրա կար անող և զրագիր: Բայց աւագ, այօք ճաշից յետոյ ես մի անծանօթ տպայի ձեռովով ստացայ այս նամակը:

Նա ձեռքը տարաւ զրպանը և հանեց մի տըրորած նամակ և տուեց Լուսնակեանին, որ անշարժ լսում էր: Սա գանդակ շարժումով վերցրեց նամակը և կարգաց իր մարում: Ահա նամակի բովանդակութիւնը:

«Միրելիս, ներիբ, որ ինքս վերջին անգամ չեմ «այցելում թեզ, ինձ համար դա շատ անցարմար է. Ես «երէկ նշանուեցի և շուտով պէտք է պատկուեմ: «Դու ինք համաձայն կ'լինես, որ մեր մէջ եղածը

«պէտք է վերջանայ առ միշտ»:

Երիտասարդը կարդալով այս նամակը առելի յաւզուեց. նա խոկոյն ճմռթեց և շպրտեց յատակին, տակով

— Սրիկայ . . .

Աղջկէր շարունակեց.

— Ես էլ համագուելով, որ էլ չկայ ինձ փրկութիւն, որ այլիս ոչ մի մարդ չի համակրի ինձ, չի հաւտայ անկեզծութեանս, և որ անցեալս շարունակ պիտի ճմլէ ու մաշէ սիրտս, վճռեցի վերջ զընել կեանքիս. ալլապէս պէտքէ ես անբարոյականութեան գիմէի . . .

— Ոչ, ոչ այդպէս չէ լինելու, գեռ կարելի է քեզ փրկել, յանկարծ ընդհատեց նրան երիտասարդը, և ընկաւ մտածմունքների մէջ:

— Ի՞նչ փրկութիւն, գառն կերպով ժալաց աղջիկը, որի ժամանակ նրա նիհար-տժգունած դէմքրի վրայ արտացոլուեց նրա ներքին յուսահատութիւնը. — Ի՞նչ էր ասում, գուր ուղում էր իմ տառապալից կեանքս էլ երկարացնել: Դուք իմ փրկութեան մասին էր մտածում, խակ «նա» այն աղնիւ երիցած սարոնը ինձ մւր էր ուղարկում. ոհ, անգութ բազդ, լաւ է ծովի կլանող ալիքների մէջ դժնեմ իմ հանգիստը, քան այս աշխարհում ապրեմ իրքի ստոր արարած . . .

Նա սկսեց լալ և հեկեկալ. նա զլուխը խոնարհեց և երեսը ծածկեց ձեռներով, արցունք-

ները յորդառատ կերպով թափւում էին նրա գիրկը, արտասունքի այդ խոշոր կաթիլների մէջ, փայլում էր նրա զզչումը, իր անցեալ կեանքի համար և բարոյականութեան նախանձախնդրութիւնը:

Նրա հեկեկանը գուրս էին գալիս վշտարեկ սրտի խորքերից ու տարածուելով փորր սենեակի լուսթեան մէջ ուարսեցնում էին թէ երիտասարդին և թէ պատերին:

Երիտասարդի աշքերից էլ գուրս ցայտեցին երկու խոշոր արցունքներ, սրտնը կարելցական և մարգասիրական զգացմունքներից էին բզիսում. նա մօտեցաւ զզչացող կնոջը, սկսեց ուղղել նրա թափթիած մազերը, իր թաշկինակով մազրելով նրա արցունքները և հանգստացնել նրան:

— Թողէր, իմ հանգիստս միայն ծովումն է, յանկարծ բացականչեց աղջիկը և խելազարի նման վեր ցատկեց մահճակալի վրայից, ուղեց գուրս սըպրտնել, բայց երիտասարդը պինդ բռնեց և շը թողեց:

— Նստեցէր, օրիորդ, մի յուսահատուէր, քաջութիւն ունեցէր զիմանալ բազդի հարուածներին. զուր անբարոյական չէր, զուր սկզբից մոլորաել էր և անազնիւ «մարդ» կոչուած արարածները օգտուել են ձեր մոլորուելուց և խարել ձեզ . . . ոչինչ, կարելի է վերականգնել պատիւն ու սրութիւնը . . .

Բայց ինչպէս, հարց տուեց ինք իրան Արտէմ

Լուսնակեանը: Եթէ թողնել նրան դարձեալ բաղդի քմահաճոցին, կրկին նրան կը խարեն, կը չեղին ուզիղ ճանապահից, և վերջնական բարյական հարուածը կը տան այս թշուառին: Սա արդէն զլուել է անցեալ վատ կեանից ու մնառում է մի բարյական հանգիստ: Արդեօք լաւ չի լինի, որ ինքը պահէ, իր մօտ մինչեւ աւարտելը ու վերապառնալը, տանի Թիֆլիս քաղաքը, նրանց մօտ պահէ իբրև մի գուվերնանդկա: Եւ արդեօք, զաղափարական բայլ չի լինի, որ ինքը սիրելով նրան ամուսնանայ նրա հետ: 2Է որ ինքը ուզում է զաղափարական մարդ լինել, չեկնել ձեականութեանց ու հարստութեան յետից: Հապա ճնողներն ու բարեկամներն ի՞նչ կասեն, արդեօք չեն բարկոծի նրան: Այսպիսի խառն մարերով շրջապատուած հանգերձ, նա գուրզուրում էր օրիորդին, հանգոտացնում ու յուսադրում:

—Ախ՛, երանի հս այն երիտասարդին հասկանայի, սիրէի մաքուր սիրով և ես այժմ կը լինէի աշխարհիս երջանիկներից մէկը: Երանի կիտենայի թէ նրանի է նա, ի՞նչ է անում, գնայի, նրանից ներողութիւն հայցէի, ասէի որ «միայն զու ես ազնիւ մարդ աշխարհում», ես անարժան գտնուեցայ քեզ» և ապա ստանալով նրանից թողութիւն, հինց նրա մօտ կեանքիս վերջ գնէի

—Ո՞վ էր այդ երիտասարդը, անունն ազգն ի՞նչ էր:

— 2Եմ ուզում նրա սուրբ անունը պղծել իմ կեպտոտ շրթունքներով, պատասխանեց աղջիկը իր փէշերով սրբելով երեսի թացութիւնը:

—Իսկ ի՞նչ է ձեր ազգանունը:

— Հովհանիմէ Կուռօնիան, եղաւ մի երկոտ պատասխան:

— Ի՞նչ, ի՞նչ, Հովհանիմէ Կուռօնիան, այս գնու ես Հովհանիմէ, յանկարծ կայծակնարի նման յետ քաշուեց երիտասարդն երկու ձեռքով բռնելով ճակատը և սաստիկ կնճռոտուելով:

Օրիորդն միրանի վարկեան գիտեց երիտասարդին և իսկայն ընկնելով նրա ոտներն, աղիողորմ արտասուելով հեկեկաց:

—Ախ՛, իմ աննման Արտէմ, զնւ ես, երազումն եմ արդեօք

Միքանի բովէից յետոյ Լուսնակեանը՝ սթափուած անսպասելի իրականութիւնից, ձեռները գրլիխն գրած, ճակատի վրայ կնճռոներ կիտած, աշքերը բարկութեան կրակով լցուած և հայեացը ձգած Հովհանիմէի վրայ անշարժ կանգնած էր:

Իսկ Հովհանիմէն չոգած նրա առաջ, իր յորդառատ արտասունքով թրջում էր նրա ոտները ու ի՞նչ որ անկապ մրմնջում:

— Ներիր ես մեղաւոր եմ փոքր ի՞նչ յետոյ լսուեց հեկեկանիրից խեղուող թոյլ կոկորդից:

— Ի՞նչ, ներել, բայց արդեօք դու այն Հովհ-

սիմէն ես, որ իմ կեանքի ոսկէգարում հռանդու պակասայրեց ուսման մէջ, տարիս կորցնել տուեց ու յետոյ խարեց, ոչ, ոչ, զու «նա» շես: Ախ, երանի շը հանդիպէի

—Ես եմ, ես եմ այն անարժան չոփսիմէն, որին զու անկեղծ սիրեցիր, բայց նա նա շը զնահատեց բեղ

Արտասուները խեղպում էր նրան:

Երիտասարդը բռունցքները սեղմած՝ կանգնած էր սեղանի մօտ, կարծես ամեն վարկեան պատրաստ էր յարձակուել նրա վրայ ու ոչնչացնել

—Ես կը սիրեմ բեղ ու կը պաշտեմ, ասաց չոփսիմէն և վեր ցատկելով շորած տեղից ընկաւ նրա վզով

—Հեռու կորիր, զոռաց Լուսնակեանը և այնպէս ուժով հրեց նրան, որ նա յետ-յետ զնալով, ընկաւ մահճակալի վրայ:

—Ո՞նց ոչ, հէնց այժմ պէտք է վճռուի իմ «լինել, շը լիներ»ս, պէտքէ կամ մեռնեմ ու ոչնչանամ:

—Ես հաշիւ շունեմ բեղ հետ, ուր մւզում ես գնա, յարեց երիտասարդը սառնարիւն կերպով:

—Քո մէջ էլ մեռած են խիզճն ու մարդասիրական զգացմունքները, ուրեմն թողի մառապեալ կեանքիս ճրագը ժամ առաջ հանգչի ծովի խորքում

Նա կրկին վեր ցատկեց տեղից, դիմեց դէպի գորս, բայց երիտասարդը արգելեց նրան ասելով.

—Սպասիր:

Նա կանգնեց աղջկայ գիմաց և սկսեց զիտել նրան, կարծես, ուզենալով համոզուել, թէ իրականութիւնն է արգեօք կատարուածը. իրօք չոփսիմէ կուռօնեանցն է սա, որին սիրել, նուիրել էր իր առաջին մէրը: նայում էր նա լուս և մոայլ աշքերավ գիտում էր նրան Այս, դա իրօք չոփսիմէն էր, բայց փոխուած. նրա նիհարացած ու գժվունած այտերը փայլում էին ճրագի թոյլ լոյսի տակ, այտուկաները և գոմնշը գուրս էին ցցանել, աշքերը նայնն էին, նոյն վառուած ու գրաւիչ հայեցքը, միայն ժամանակի վատ ազգեցութեան կը նիրն էր աւելացել արտայայտութեան մէջ:

«Նա է, չոփսիմէն է» մտածեց Արտէմը, բայց ինչ անել, զնւրս անել նրան—նա չուրը կընկնի, և իր խիզճը կը տանջէ իրան, որ շը ներեց զզչացած աղջկան, ներիշ, —դա էլ շատ դժուար էր, զրա համար հարկաւոր էր մոռանալ անցիւալը, մահաւանդ չոփսիմէի պատմած անցիւալ կեանքը, կոիւ մզել ծնսպների և տգէտ հասարակութեան դէմ, որոնք կը ըարկուէին իրան՝ այդ ընկած աղջկան հովանորելու համար

Կնճիւները մերթ երկում էին նրա ճակատին, մերթ անյայտանում զուրպթ թողնելով նրա երեսը, ինչպէս խաւար ամպերը ծածկում են պայծառ երկինքը և ապա հեռանում:

—Գու ինձ սիրեցիր, հոգիս, խօսից չոփսի-

մէն, զսհեցիր քեզ ինձ նման մի անարժան, ստոր
պղջկայ համար, բայց ես, ես . . . անարդն . . .
չը գնահատեցի բո աղնիւ սէրդ, խարեցի, գաւա-
ճանեցի քեզ . . . այն, դա . . . ւա . . . ա . . .
ճա . . . նե . . . ցի . . . — արցունքները և հեկեկան-
քարձեալ խանգարեցին նրան պարզ արտաստ-
նելուր առերը, և նա թոյլ ու կտրուող ձայնով միայն
մրմնջում էր, — դու ինձ թողիր, եկար ուսումդ շա-
րունակելու, իսկ ես սրան նրան խարեցի և վերջը
դարձայ մարդոց խաղալիք . . . որոնք փսխանակ
ինձ օգնելու, բարձրացնելու, աւելի հարուածեցին
զէպի կեղար, և ես կտմաց-կամաց մտաբերեցի քեզ
բո մաքուր սիրտդ ու սկսեցի տանջուկի խղճիս խայ-
թից . . .

Նրա ձայնը կտրուեց. նա լոեց մի փոքր և
մնաց անշարժ. նրա աղերսալի խօռերն ու սրտա-
մորմոր արցունքները խղճահարեցինում էին երիտա-
սարդին, որ յառած աշքերով, անշարժ նայում էր
նրան և մտածում . . .

—Ախ՛, երանի թէ մի փոքր ուշ հեռացնէիր
ինձ-քեղանից, գուցէ դու բո սուրբ սիրավ և աղ-
նիւ վարդով ինձ ուղղէիր, կապէիք քեզ հետ և եր-
ջանկացնէիր. և այժմ, այժմ . . . չոխիսիմէ Կու-
ռոնեանը այս օրում չէր լինի . . . Ոչ՛, անդուժ
ծնող, առաջին մեղաւորը դու ես, դու, որ քո ծը-
նողական պարտքը չէիր կատարում, չէիր հետեւու
բո չոխիսիմէի վարքին, բարասիրտ մայր . . .

Սրտէմ Լուսնակեանը ագում էր խօսել, մի-
րան ատել նրան, բայց լեզուն կապուել էր, նա մը-
նաց լուս և անշարժ, և միայն անթարթ աշքերով
նայում էր աղջկան ու լսում նրա խօսքիրը, որոնք
բղխում էին անկեղծ աղբիւրից:

—Այժմ, սիրելի Սրտէմ, ես անդունդի եղերքին
եմ կանգնած ու քեզ օգնութեան եմ կանչում, — մի
քայլ այն կողմ, և ես յախտեանս կորած եմ. իս
փրկիչը զու պիտի լինիս. ինչպէս մեկնեցիր ձեւդ
և ազատեցիր ինձ ծովի ալիքներում անյայտանա-
լուց, այնպէս փրկիր ինձ բարոյապէս, և ես կը
պաշտեմ քեզ իրք փրկչի. Մոռացիր ամեն ինչ, ես
փոխուեցի, վերածնուեցի հոգւով և մարմնով. այլ
ես այն չոխիսիմէն չեմ. ես այժմ ուրիշ մի կին եմ,
բո «ներում»-ն ինձ կը փրկէ, և բո «ոչն» ինձ վեր-
ջին հարուած կը տայ ու կը պորէ յանիտենական
խորխորատ . . .

«Ներել, ներել» չչիջում էին նրա ականջին թէ
սենեակն՝ իր ականատեսո չորս պատերով, և թէ սե-
նեակի անպաճոյն կահկարասիրը. Մի ներքին ձայն
էլ գրգում էր նրան ու ստիպում լսել այն թշուառ
աղջկան, սրբել նրա ակիսողորմ արցունքները և ձե-
ռից բռնել, վեր բարձրացնել. Զէ որ ինքը ազա-
տամիտ երիտասարդ է, զպայուն և զթասիրտ, ին-
չն արհամարէ զզացող կնոջ արցունքներն ու պա-
զատանքը, չէ որ ինքը միշտ բարզել է ընկերնե-
րին ներողամտութիւն և մարդասիրութիւն, ահա և

գէսլը, որտեղ ինքը պէտք է ներռդամտութեան ու մարդասիրութեան ամենամեծ բայլն անէ. նա սիրել է այդ ազգկան, գդուել, համբուլուել, բայց անկապատճանվածները ազգկան ուրիշ ուզգութիւն տուին մինչև այժմ. իսկ այս ժամկից սկսեալ նոյն ազգայ սիրու վերածնուեց ու սկսեց բարախել միմայն այս երիտասարդի համար, որից և սպասում է փրկութիւն:

Այժմ արդէն մի վերջնական մեծ պատերազմ սկսուեց Լուսնակեանի զգացմունքների մէջ: Նրա արտայայտութեան փոխօխութիւնները ցոյց էին տալիս ներքին տարաւթերութիւն:

Եւ վերջապէս, յանկարծ անհետազան նրա ճակատի վրայի կնճռոները և նրա հայեացը վայեց ներռդամտութեան ու մեծահոգութեան զգացմունքների յազդանակով:

Բարձրացիր յատակից, նատիր ամեսոփ վրայ, ասաց երիտասարդը երկար լուսութիւնից յետոյ, ըրանելով չոփիփոխմէի գալկացած, ուժասպառ բազուկը և վեր բարձրացնելով:

— Ներում եմ . . . քեզ շարունակեց նա. թնդ այդ օրինակը ես տամ, որ կարելի է տարիներով բարոյապէս ընկած, անառակացած կը նոդը ներել և սիրել, երբ նա զգաւմ է ի խորաց սրտէ: Իհարկէ շատ և շատ նախատինիքներ են բապաւում ինձ իմ հայրենիքում այս բայլիս համար, ծնողներիս նետ գեռ ընդհարումներ կ'ունենամ, բայց

ոչինչ, զգում եմ, որ արդար զործ եմ կատարում: — Ոչ, փրկիչս, կեանքո, աղաղակեց բերկրանքով լցուած չոփիփոխմէն և արագութեամբ փարուեց նրա զգովը, և պինդ սեղմուելով նրա կրծքին, հրպեց իր շարքաշ՝ դալկացած երեսը նրա երեսին ու սկսեց արագաբար համբոյրներ քաղել

— Մեծահոգի արարած, սիրելի ու պաշտելի էակ, ես միայն ներումն եմ խնդրում, զու աւելին ես անում, շնչում էր նա երիտասարդի ականջին, պինդ սեղմուելով նրան և աչքերից թափելով ուրախութեան արցունքներ:

Արտէմ Լուսնակեանը, որ մինչ այդ բոպէին զգում էր այդ ազգկանից, այժմ՝ համբուլում էր նրան սիրով և մեծ խանգով, համբուրում էր աւելի մեծ ծարաւով, բան թէ 6-7 տարի առաջ «օրիորդ» չոփիփոխմէն էր զրկում ու համբուրում:

— Ներեցի, չոփիփոխմէ և կ'աշխատեմ մոռանալ բո նողկալի անցեալը, բայց

Նա զարձեալ կնճռուտուեց ու մռայլուեց:

— Մի կասկածիր իմ մասին մազաշափ անկամ, հոգիս: Ես կը սիրեմ քեզ, ես կ'աստուածցնեմ քիզ մինչև մահ-գերեզման: Եւ եթէ դու իմ մէջ մի վատ հակում տեսնես, բո այժմեան ներռդամտութիւնն ու մեծահոգութիւնն ատրճանակի մահացուցիչ հարուածով փոխարինիր:

— Մենք կ'ամսումնանաք, վերջնական զիստ տուեց Արտէմ Լուսնակեանը:

Միքանի օլից նրանք պսակուեցին և սկսեցին իրանց նոր կեանքով մոռանալ տալ բոլոր դժբաղտ անցեալը

Վերապանալով հայրենիք Արտէմ Լուսնակեա-
նը դարձաւ հասարակական անդամ, նրա աղնիւ
մշակ. իսկ տիկին Հռիփսիմէն սկսեց ինքնակրթու-
թեամբ նախապատրաստուել իսկական մայր և տան-
տիկին լինելու համար

ԲԱՆԱՐԿԵԱՆԵՐԸ

Բանտում սովորական երեկօններից մէկն է, մի ընդարձակ սենեակում (տղամարդկանց բաժանմունք) գտնւում էին մօտաւորապէս 30-40 հոգու շափ բանատարկուածներ—մոխրագոյն զգեստներով։ Գուրաը սաստիկ ցուրտ է. ձիմուր կամաց կամաց բրդում է վերից և ծածկում առանց այդ էլ սառած զետինը։ Ներսը՝ բանտում, ընդհակառակը, տաք է, նրանց չնշառութիւնը, ծխախոտի ծովսը և շարունակ փակ մնացած նեխուած օդը միախառնուելով, բաւական ջերմութիւնն էին տալիս սենեակին։ Բանտարկեալիերից՝ ոմանքը պառկած էին իրանց անկողինների վրայ և աշքերը առաստաղին յառած մտածում էին, մտապատկերում իրանց արածները մարդկանց վերաբերմամբ, որոնց համար և արձանացել են այստեղին։ Ոմանքը ծխախոտը ծխելով լուռ բայլում էին սենեակի մէջ գլուխը խոնարհած, առանց նայելու շուրջը։ Աւելի երիտասարդները անտարբեր իրանց դրութեանը, խմբուած մի մահճակալի մօտ, բարձրաձայն խօսում էին, ծիծագում, կատակներ անում և կամ պատմում իրաբանչիւնն իր սխրագործութիւնը, միւսը պատմում էր իր հմուտ

գրապահնանութեան մասին, բայց որ մի նոր ընկերոջ անփորձութիւնից բռնուել էր այս անգամ, — երբորդը պարզենում էր զիշերային արշաւանքների մէջ, որի ժամանակ բռնուել էր, չորրորդը պատմում էր մի կիսատ մնացած գողութեան մասին և խոստանում էր, որ բանտից ազատուելուց յետոյ անպայման կ'աւարտէ սկսած ձեռնարկութիւնը: Միքանի հասակաւոր բանտարկեալներ էլ մի արիշ կողմում նոտած միմիանց մօտ՝ պատմում էին իրար վշտերը և գարդերը, նրանցից ոմանք անարդար կերպով ին ընկել այստեղ, միւսին՝ հարուստ պարտատէրն է ձգել տուել բանտ միքանի բուրլի փող ժամանակին շը վճարելու համար. երբորդը նոյն իսկ արցունքներ էր թափում աշքերից, յիշելով իր բաղցած մնացած ընտանիքը, երեխանները, իսկ ինքը այստեղ է տանչըւում: Մի խօսրով, որքան գէմքեր կային այստեղ, այնքան տարբեր արտայայտութիւններ: Հոգեկան մոայլը՝ թախիծն ու մտատանջութիւնը իրանց դըրօշմը դրել էին նրանցից ամեն մէկի երեխին:

Միայն նրանք էին անհոգ ու անտարբեր, որնք կամ չուտով գուրս էին գալու բանտից, և կամ չունեին ընտանիք, որի մասին հոգային և կամ թէ նրանք, որոնք միքանի անգամ նստել էին բանտ և վճռել են մինչև կեանքի վերջը բանտի մշտական կեցաղ լինել: Իսկ նրանք՝ որոնք կեանք խորի ու բորիթ ճանապարհի վրայ սայլաքերի են — զլորուել են, ընկել այստեղ, — բանտը, այս

անգործութեան, մտատանջութեան և կեանքի ուժեր մաշսպ բռնել:

Բանտարկեալների մէջ աւելի աչքի էին ընկեան երկուսը իրանց արտարինով և թէ ներքին՝ հոգեկան դրութեան ելիէջներում: Մէկը մօտտորապէս մի ՅԵ. տարեկան, առողջ կազմուածքով, ցածրահասակ, սեահներ ու թռւխ գէմքով մարդ էր, որ նստել էր մահճակալի վրայ, ծխախոտը ձեռին, գրլուխը խոնարհած նիրհում էր և մտածում: Նա ուշագրութիւն չէր դարձնում ոչ ոքի վրայ, չէր խօսում ոչ ոքի հիտ և եթէ մէկը մօտենալով նրան հարց էր առաջարկում, նա ակամայից, կոպիտ կերպով էր պատասխանում: Նրա ֆիզիօնոմիան, գէմքի արտայայտութիւնը վճռականութեան ոգի էին արտայայտում նրա մէջ, մի տարուց աւելի էր, որ նա տառապում էր այստեղ և զեռ երեք ու կիս տարի էր ոնի մնալու. Նա ծխում էր շարունակ և մտածում: Երբեմն-երբեմն ցնցւում էր, դոգում ամբողջ մարմնով, ոչ թէ ցրտից — այլ ներքին յուզմունքից: Նա սեղմում էր աջ բռննցքը, գարկում մահճակալին, ատամները կրծտայնում, աշքերը կատաղութեամբ լցւում: Բայց յանկարծ նայելով շուրջը, տեսնելով որ կան որիշներ և շատերն իրան են նայում — սթափում էր: Երկրորդը 21 տարեկան գեղիցիկ երիտասարդ էր. նրա լայն սպիտակ ճակատը, մեզմ արտայայտութեամբ աշքերը, շարժուածքները ցոյց էին տալիս, որ նա կամ մէծ ընտանիքի կրթուած զաւակ

էր, կամ թէ ինքը որիէ դպրոցում ուսած։ Նրա վրայ չէին յարմարում բռնաւորի անձունի ու կոշտ շրերը, այլ ինչպէս, բժշկի տօնական ջրեղ հագուստ հագցնես մի հասարակ ածխավաճառի։ Նա լուռ, գիլիկոր յաճախ նայելով իր շուրջը, սրա նրա հարցերին սիրով պատասխանելով, աջ ձեռքը գրապանում դրած, քայլում էր բանտի մէջ։ Երկար քայլելուց յոգնեց և նստեց իր մահճակալի վրայ, որը շատ մօտ էր վերոյիշեալ բռնաւորի մահճակալին։ Նա նստեց և շարունակեց մտածել։

—Պարոն Դաւիթ, ներեցէր, որ ձեզ խանկարեցի մտածելուց, դարձաւ նրան երիտասարդը, —իմ կարծիքով աւելի լաւ արեցի, որովհետև շատ մոտածելը, վշտերի հետ խօսելը լաւ հետեանը չէ ունենում։ Ասած է՝ թշուասին թշուասն է միշտ միսիթար, պատմեցէր, թէ ինչ է ձեր յանցանքը, որ բանտարկուել էր և վերջապէս նկատում եմ, որ տանջում էր մաքերագ, ասէր, աւելի կը թեթեանաք մըտատանջութիւնից։ 2ը նայած, որ երբորդ օրն է ինձ այս բաժանմունքը տեղափոխելիք, բայց ես ալզին ըմբռնեցի ձեր դրութիւնը, ճանաչեցի ձեզ, և հետաքրքրում եմ, խնդրեմ, պատմեցէր, մի կերպ կ'անցնի ժամանակը։

Դաւիթը բարձրացրեց վլուխը, նայեց երիտասարդ բանտարկեալին, լւու մնաց միքանի վայրկեան և ծխախոտը կամեցաւ ծխել—բայց հանգած էր. նա շպրտեց գետին հանգած ծխախոտը և դարձեալ

նայեց նրան։

—Ե՞՞, սիրելիս, վերջապէս խօսեց նա խոր հսկոց հանելով և զլուխը շարժելով, —ոչինչ չը հասկացայ այս փուճ աշխարհից, ոչինչ. ասաց ու լոեց։

—Մի յուսահատուէր, պլ. Դաւիթ, կեանքը մի այնպիսի անըմբոնելի քաօս է, որ դժուար է որոշել նրա էռութիւնը։ Միայն այս է յայտնի և ակներին որ մարդ միշտ ձգտում է ապրել, գոյսվթեան կռուի մէջ մնեամարտում է կեանքի համար, չը նայելով, որ կեանքը որբան ունի քաղցր, երանելի կողմեր, նայնքան և դանի, ծանր ու գաժան կողմեր, և պէտք չէ յուսահատուէր, այլ աշխատել առաջ գընալ, հարթել կեանքի խորթ ու բորթ ուղին։

—Իրօր, սիրելի Կոստեա, զու ինձ շատ խելօր երիտասարդ ես երկում, զու բշերից մէկն ես։ Եփոս միայն, որ քեզ նման երիտասարդ ոյժը մաշտում, նուազում է այս դժոխրի մէջ, ասաց նա և ձեռքով ցոյց տուեց բանտը։

—Ո՞վ է զերծ կեանքի թակարդներից. թէ ծեր, թէ երիտասարդ՝ իրրի մարդ՝ ենթարկւում ենք այսպիսի զրութեան։ Բայց, խնդրեմ պարզն Դաւիթ, պատմեցէր, թէ ինչու են ձեզ բանտարկել, խնդրեց երիտասարդ բռնաւորը ելնելով իր մահճակալից և հստելով նրա մահճակալի վրայ։

Դաւիթը լսեց միքանի վայրկեան, մտածեց թէ ինչպէս սկսէ և խօսեց,

—Ահա թէ ինչու եմ բանտ ընկել, սիրելիս...

— Ես մի արհեստաւոր մարդ եմ, հիւսն, օրով աշխատում եմ որա, նրա մօտ. 17 տարի է, որ ամռանացած եմ, բայց գժրախտաբար չ'ունիմ ոչ մի գաւակի: Կինս թէ կրթուած չէ, (երկու անկիրթներ իրար գտել ենք), բայց ամռանական հաւատարմութեան մէջ անկասկածելի է, պէտք է տսիմ, որ նա բաւական գեղեցիկ է: Սրանից մի տարի առաջ, հին բնակարանից տեղափոխուեցի նոր բնակարան: Տանտիրոջս տղան, որ հարուստ է և ամռանացած, ապրում էր նոյն տների մէջ և հետրզնետէ սկսում է հետեւ կնոջս անբարոյական մորերով: Կինս, իհարկէ, նրա այդ կեցուոտ մրտրերին զգուաներով ու ատելութեամբ է վերաբերում, և ինձ էլ ոչնիշ չէ առում, որ կասկած շընկնի իմ մէջ: Ես էլ առաւոտ վաղ դուրս եմ գալիս տանից, երեկոյեան զնում տոնն, այնպէս որ տան մասին տեղեկութիւն չեմ ստանում:

Մի օր այս սրիկան վճռում է վերջնականապէս հասնել իր նսլատակին—բնաբարել կնոջս: Այդ օրը նրանց տանեցիր տանը չեն լինում ամբողջ օրը: Այդ պարզնը օգտուելով հանկամաներից ճաշուալ ժամանակ ներս է մտնում կնոջս մօտ և աշխատում համոզել իւր կրթերին բաւականութիւն տալ . . . բայց կինս չէ համաձայնում, խնդրում, աղերսում, նոյն իսկ սպառնում է նրան, որ դուրս զնայ, հեռանայ, նա շաբունակում է պիդելը և տեսնելով որ չի համոզում կնոջս, վրայ է ընկնում և ըս-

պառնալսվ, ուզում է բանաբարել . . . Բարեբախտաբար, այդ օրը ես մոռացել էի մի գործիք, որ անհրաժեշտ էր և ճաշուայ հանգստեան ժամին տուն զնացի վերցնելու այն: Եկայ տուն, մտայ բակը, բարձրացայ աստիճաններով, տեսայ, որ խոժանոցի գուռը բաց է, բայց սենեակի դուռը և պատուհանների ծածկացները ծածկած են: Մի բռպէ մտածեցի, որ կինս քնած է, կամ մտել է տանտիրոջ սենեակը, բայց յանիկարծ սենեակից ականջիս հասածայներ. — Դուրս կորիք, սրիկայ, լիրէ, ինչ ես ուզում, կուրս կօրիք . . . Ես որոշեցի կնոջս ձայնը: Անմիջապէս հախազպացի մի վատ վերջաբան: Լուս վագեցի խոհանոց, վերցրի մի գանակ և ձեռքիս բռնած, սկսեցի կրախ ականջ զնել: Ես իսկոյն հասկացայ, որ կինս հակառակում էր, նրա սրիկայական առաջարկներին. բայց այն սրիկան, այն սրիկան, — Դաւիթը ուժեղացրեց ձայնը և բըռունցըները սեղմեց, — այն սրիկան վճռել էր ըստորւթեան բաժակը դատարկել մինչեւ վերջ: Մէկ էլ յանկարծ լաւեց կնոջս ձայնը — օպնեցէր:

— Վայրկենապէս արխմել պատիսը գլուխս թռաւ, աշքերս մթնեց, ծնկներս և թեհերս գողգողացին և կատաղոծ արխմարեռ զազանի նման ներս ընկայ, բայց շը կապազայայ սրոշել մի էր թշուառականը, սրովհետեւ աշքերս արխմառի լցուել էին, և մերենայաբար գանակը խրեցի նրա կուրծքը և նա անմիջապէս վլորուեց գետին:

Այս խօսքերի վրայ Դաւիթը բռունցը ուժեղ կերպով զարկեց մահճակալին, կարծես, այս բոպէին էր զարկում դանակը նրան:

—Ես երկար, շատ երկար, դանակը ձեռիս կանգնած էի և նայում գոհիս, թէ ինչպէս թրաբտում էր նո մորթած հաւի նման... Միքանի բոպէի բանականութիւնս տեղ եկաւ, խոկոյն վրայ ընկայ ուշամտափ կնոջս սթափեցնելու, որը հազիւ հաղ ուշրի եկաւ: «Ո՞հ, ազատարար հրեշտակ էր» գոչեց նա բանալով աշքեց և փաթաթուեց վզովս: Նա գեռ չը գիտէր—թէ ի՞նչ էր կատարուել և երբ նայեց շուրջը ու տեսաւ ընկած արիւնաթաթախ դիակը, մնաց ապշած, նա այն ժամանակ միայն հառկացաւ ամեն ինչ: «Արժանի էր» տասց կինս և լըռեց: Ես իհարկէ անմիջապէս տեղեկացրի տեղական ոստիկանութեանը անցքի մասին: ինձ բոնեցին և դատի ենթարկեցին: Բոլորը միաբերան գոչում էին, որ ես ազատուելու եմ, որ ես մեղաւոր չեմ այն բանում, և ամեն մարդ այդ բոպէին կը վարուէր այնպէս, ինչպէս ես: Գա շատ բնական բան է: ուրիշ կերպ վարուել չէր կարելի: Բայց ի՞նչ: Գատեցին ինձ: Այն սրիկայի հայրը իր փողի զօրութեամբ գարձեց միքանի փաստաբաններ և թէ ուրիշ ի՞նչեր արեց փողով . . . չը զիտեմ. իսկ ես, որպէս խեղճ արհեստաւոր, միջոց չ'ունէի փաստաբան գարձելու, զատեցին ինձ իրի մարդասպանի և դատապարտեցին $4\frac{1}{2}$ տարուայ բանտարկութեան:

Ահա, սիրելի Կոռտեա, հիմա ես կրում եմ իմ պատիժու . . . վերջացրեց Դաւիթն իր եղերական պատմութիւնն ու մի խոր հոգուց հանեց:

Միքանի վարկեամի լուռ մնաց երիտասարդը պատմութեան ազգեցութեան տակ. նա ուզում էր խոսել, բայց լիզուն չէր շաբժւում:

—Այժմ ուր է ձեր կինը, պ. Դաւիթ, ինչով է ապրում, հարցրեց նա, նայելով Դաւիթի աչքերին:

—Իր հօրանից տանն է:

—Ո՞հ, փող, փող. ինչը զօրաւոր է այդ մետաղը, արգարը մեղաւոր է գաւնում նրա շնորհիւ, և մեղաւորը՝ արգար: Իմ պատմութիւնը ձերի հակառակն է, պ. Դաւիթ, ես էլ եմ բանտարկուած իրրի մարդասպան:

—Գու ի՞նչ ես արել, որպի, քոնն էլ պատմիր, մի ծածկիր, աւելի կը թեթեանուած մտած մունքներից:

—Ահա և իմ գլխիս անցքը: Ես գիմնազիայի վերջին գասարանումն էի, երբ սիրահարուեցի մի փոքրիկ օրիորդի վրայ: Ճանապարհին առաւտները համարեա միշտ պատահում էի նրան. նա գրաւիշ էր արտաքինով, գեղեցիկ, դուրեկան: Նա էլ սովորում էր գիմնազիայում: Ես այն աստիճան տարուեցի նրանով, որ կորցրի հանգիստս, ցրուեցի ուշըս, այլիս չէի կարողանում սովորել զասերս: Մինչև վերջին գասարան առաջադիմութեամբ անցել եմ, բայց այս վերջին տարին ուշըս ու միտքս նուիրելով նրան, ես թողեցի դասերիս: Ես զգացի

ինձ սիրահարուած։ 2ը գիտեմ, գուք ընդունում էք սէր, թէ ոչ, մի խօսքով ես սիրահարուեցի այդ օրիորդի հետ։ Ճանօթացայ նրա հետ և փոքր ժամանակի ընթացքում նա էլ յայտնեց իր սէրն զէպի ինձ։ Բոլորն իմացան միք սիրահարութեան մասին։ Ես յայտնեցի իմ սէրը ծնողներին և նրանց համաձայնութիւնն էլ առայ օրիորդ Եւա Հութակեանի (այսպէս էր նրա աղջանանը) հետ ամուսնալու՝ աւարտելուց անմիջապէս յետոյ։ Նա այն աստիճան մտերմացաւ ինձ հետ, սիրեց և փայփայց, որ եթէ այնունետեւ մի օր չը տեսնէինք իրար, չը համբուրտէինք, այն օրը մեզ համար մի ծանր տարի էր։ Ես աւարտեցի գիմնազիան։ Իսկ նա մըտաւ վեցին դասարան։ 2ը հայցձ՝ որ գտնուեցան բարերարներ, ինձ ուղարկելու ուսումն շարունակելու, բայց ես ընդմիշտ մերժեցի այդ, թողեցի բարձրագոյն ուսումն ստանալուս միտքն ի սէր Եւայի, և սպասեցի նրա աւարտելուն, որ ամուսնանանք։ Բայց միշտ չեն իրականանում մարդուս, մանաւանդ երիտասարդ մտքերի, երազները։ Անցաւ տարին, նա էլ աւարտեց։ Այդ տարուայ ընթացքում յաճախ ականջիս էին համում Եւայի գաղտնի սիրային յարքերութիւնները ոչ թէ մէկի կամ միրանիսի, այլ շատ շատերի հետ։ Բայց ես կուրանալով իմ սիրուցս, չէի նկատում այդ և չէի ուղում լսել և հաւատալ այդպիսի լուրերին։ Մանաւանդ որ, երբ ես նրան ասում էի «Սիրելի Եւա, ես քեզ նախօրօք

ասում եմ, որ սէրը երկուամեր պիտի լինի, և ոչ բռնի, եթէ գու ինձ չես սիրում և չես կարսդ սիրել, այժմուանից թնդ ինձ, հեռացիր», նա երդուում էր, երդուում էր սաստիկ, նոյնիսկ արցունք էր թափում, որ ես կասկածում եմ նրա սիրան, ընկնում էր վզովս, համբուրում ինձ և փաղաքում։ «Ես միայն քեզանով պիտի ապրեմ, կրկնում էր նա, քեզ մօտ պիտի վերջին շունչս փշեմ։ Ես իհարկէ հաւատում էի։ Մի օր էլ իմ ծանօթ օրիորդներից մէկին ինձ միրանի նամակներ տուեց և տաց։ «Կարգա հոգեկան քաջութեամբ»։ Հետաքրքրութեամբ բաց արի, կարգացի, և ի՞նչ էր կարծաւմ, ի՞նչ նամակներ էին գրանք։ Դրանք Եւայիս գրած նամակներն էին մի երկու ահծանօթ պարոնների։ Ժամագիր էր լինում մէկի հետ, միւսին սէր յայտնում։ մի նամակ էլ գրած էր մի պարոնի ձեռքով, որ գրել էր Եւայիս, յիշեցնելով նրան ինչ որ համբուրների մասին, անց կացրած ուրախ լուպէների մասին։ Ես գլուխ ընկայ։ Ապա խնդրեցի օրիորդին, որ ինձ պարզէ ամեն ինչ։ Նա էլ պատմեց, որ Եւան ընդունակ չէ մէկին սիրելու, այլ նա բաժանում է իր սէրը և համբոյրները շատերին, և այն էլ առանց խտրութեան նոյնիսկ յայտնեց ինձ առաջիկայ նշանակած տեսակցութեան օրը, տեղը, և թէ ում հետ։ Մտէր այժմ իմ գրութեան մէջ։ Զրկուեցի բարձրագոյն կրթութիւնից, ոչնչացրի իմ ապագաս նրա պատճառով, և նա, պարզուեց, որ ինձ խտրում է։ 2ուզեցայ

հաւատալ այդ բաներին և կամաց-կամաց հեռությ
հետեւթպ, շատ բան աշքովս տեսայ և համազուեցի
Եւայի փշացած լինելու մասին։ Այժմ՝ որպէս խար-
ուած ոմն, որպէս սիրառթափուած, ևս սկսեցի
պատիւ պահանջել նրանից։ Վրէժինդրութեան ողին
ծագեց իմ մէջ, որ օրէցօր աճում էր։ Ես կորցրի
իմ հանդիսար, բանականութիւնը։ Մի օր էլ վերջ-
նականապէս բաժանուեցի նրանից, թքելով երեսին,
և զիտէք ինչ, նա էլ թրեց իմ երեսին։ Ես արդէն
խելագարի նման սկսեցի ման գալ փողոցները, նը-
րանց դռներում, որ տեսնելիս սպանէի նրան, կամ
հախատէի և թեթեացնէի սրտիս բեռը։ Մի օր լր-
սեցի, որ մէկի հետ տեսակցութիւն սնի այ-
գում։ Ես վերցրի ատրճանակո և վազաժամ գնացի
այդ այգին ու պահ մտայ ծառերի յետեր։ Մի ժա-
մից յետոյ, տեսնեմ, գալիս են Եւան և մի ոմն թէտ-
լիստ։ Նրանք նայեցին իրանց շուրջը և համազուե-
լով, որ ոչ որ շը կայ, նատեցին ծառի տակ և իրար
ձեռքեր բռնելով, սկսեցին բաղրը զբցել ու համ-
բուրուել։ Ես կորցրի ինձ։ Ժամը վճռական էր.
Հենց որ նրանք երկրորդ անգամ հալեցին իրար շըր-
թունքները, ևս սկսեցի մօտ վագիլ ատրճանակը
ձեռքիս և զեռ չը հասած, արձակեցի երկու ան-
գամ, ուզենալով հենց տեղի ու տեղի ոչնչացնել
նրանց։ Բայց գնդակը վրիպեց։ Նրանք իսկոյն ա-
ղաղակ բարձրացրին ու վաղեցին վէպի զուռը, ևս
վճռել էի սպանել և յետներից վագիլով չարունա-

կում էի ատրճանակի մատը սեղմել։ Բայց, դժբակո-
տաբար, միայն երկու գնդակ էին եղել մէջը։ Պայ-
թիւնի և նրանց աղաղակի վրայ մօտ վաղեցին
պարտիզպանները, զրօմեսովները և ինձ զինաթափ
անելով, յահճնեցին ոստիկանին։ Դատեցին ինձ ու
նրան, և ինձ մեղաւոր ճանաչելով, իրոհ սպանու-
թեան փորձ անող մի անմեղ օրիորդի վրայ, զա-
տապարտեցին 2 տարուայ բանտարկութեան, իսկ
նրան—արդարացրին։ Այժմ նա, այն անքարայակա-
նը, ազատ շրջում է երկրիս վրայ, շարունակում է,
անքարոյականանալ, իսկ ես, ևս որ նրան անկեղ-
ծօրէն սիրեցի ու պաշտեցի, այսուել տառապում եմ
ծնողներիս թողած վշտի ու սգի մէջ . . .

Երիտասարդ բռնաւորը չը զսպեց արցունքները,
որոնք յարգութեամբ գուրս ցայտեցին նրա աշքերից
և զլորուելով նրա զեղնած՝ նիհարած այտերի վը-
րայով, ընկան բռնաւորի հագուստի վրայ։ Նա եր-
կու ձեռքով ծածկեց երեսը ու սկսեց հեկեկալ . . .

— Ախ, զիտէք, ինչ է նշանակում խարսել
սիրոյ մէջ, թունաւորել աղաղան, կեանը և ամեն
ինչ զոհել։ Այն էլ այնպիսի մի նեխուած, վշացած
օրիորդից խարսել։ Ախ, կանայք, կանայք, ձեր
սիրոն ընկունակ է հիմնովին նեխուել, հոտել, վը-
շանալ և թունաւորել ուրիշ անմեղների։ Երանի թէ
գնդակին ուզելով դիմչէր նրա սրտին և գլուքը զետին։
Ո՞ր սիրառթափուածը չի փորձել սպանելու օրիոր-
դին։ Նոյնիսկ սպանելին այնպիսի անզգայ աղջկան

հրճուանը է ինձ համար: Ախ՛, երանի նա իմ աշ-
քերիս առաջ կենդանի խարոյի վրայ այրուի, որ
ես նայեմ, տեսնեմ նրա տանջանքներն ու ժպտամ,
ուրախանամ, ուր է:

— Ափսոս երիտասարդ, ափսոս, որ այդպիսի
մի անարդ ազգկայ պատճառով մաշում ես կեան-
քըդ: Ո՞ւր են արդարութիւնն ու արդարագոտու-
թիւնը, ուր են տէր Աստուած, բացականչեց բար-
ձրը ձայնով Դաւիթը: Մեռել է մարդոց խիզճը, օ-
րէնքները ոտնատակ են եղել, փողը տիրացել է թէ
խզճն, թէ մտքին և թէ օրէնքին . . . եղրափա-
կեց նա:

— Քնեցէր, քնեցէր, զահլա տարար, լոււց
գիմացի մի մանճակալի վրայից:

Երկու բռնաւորները նայեցին շուրջը, տեսան,
որ բոլորը պառկած, քնած են և խռմփում են:
Երանիք էլ յուղուած, շարունակ հոգւոցներ հանելով,
հանուեցին ու պառկեցին տեղերը . . .



Բ Ժ Ւ Ճ Կ Ը

Ընդարձակ շքեղ զարդարուած զահլիճը լի է
սպասողներով: Զորս կողմում բազմոցների և աթոռ-
ների վրայ նոտած են խառն կերպով կանայք և
տղամարդիկ:

Տիրում էր բնդիչանուր լուութիւն: Ոմանք զբ-
լուխը խոնարհած՝ նիրհում էին, միւսներն անհամ-
բերութեամբ ժամացոյցն էին հանում ու նայում,
շատերն էլ լուս գիտում էին սրան-նրան: Միայն մի-
քանիսը երբեմն խանդարում էին լուութիւնը, որոնք
շնչում էին միմիանց ականջին ու լոււմ կրկին:

Ցածախ հոգւոցներ էին գուրս զալիս սրա նրա
կրծքից. մերթ տնբում էին, ձրագի լոյսն, անցնե-
լով գունաւոր ապակու միջից, ընկնում էր նստող-
ների գունատ և մաշուած երեսների վրայ ու մոայլ
կերպով արտացոլում:

Դուռը ճռաւալով բացուեց և ներս մտաւ մի
կին միջին տարիներով: Հազին ունէր սև ցնցոտի
շորեր, զլսին փաթաթած մի զեզին պատառոտած
բալտատի, ուսին ձգած էր փոքրիկ շալ, իսկ կո-
շիկները հին, մաշուած, որոնց մէջ մտել էր փողոցի
ձինախառն ցեխը:

— ՕՇ, Տէր աստուած, մրմնջաց նա ինքն իրան,
որքան մեծ բազմութիւն կայ, երբ կը հասնի ինձ հերթ:

Նա գոզգոզալով և մի տեսակ անբացարելի
երկիւղով անցաւ ժողովրդի առաջից և պատի մօտ
շարած աթոռներից մէկի վրայ նստեց: Նրա գալուկ
երեսի վրայ կնճիռներն ու ագերսալից հայեացը,
հոգւցներն ու արտաքին գծաւն հագուստը ցոյց
էին տալիս այդ կնոջ խոր վշտի ու ծանր պայման-
ների մէջ գտնուիլը:

Վերջապէս բացուեց միջին գուռը և լուսեց մի
խրոխտ ցայն. — Պա բժիշկն էր:

— Սահակեան!

Իսկոյն նստած տեղից վեր ցատկեց մի տիկին
և ներս մտաւ. Հինգ բազէից յետոյ գուրս ելաւ նա
և ներսից լուսեց մի սրբիշ ազգանուն: Գնաց և սա:
Այդպիսափ ընդունելութիւնը շարունակուեց: Եւ գեռ
շատերը կային ներս մոնելու. ամենավերջինն այդ
նորեկ կինն էր: Նա անհանդիստ նստած էր և չա-
րունակ շարժւում էր իր տեղում, նայում էր գուրս
և դիտում չորս բոլոր: Ակների էր, որ նրա ուշա-
գըրութիւնը ուրիշ տեղ էր թուել:

— Ախ, մինչի երբ սպասեմ,, Տէր Աստուած,
եարար ինչ եղաւ Մելքրակո, մրմնջում էր նա ձեռ-
ները ծնկներին տրորելով:

Փոքր ինչ մտածելուց յետոյ, նա ոտքի կանգ-
նեց և բարձրաձայն դիմեց բոլոր ներկայ եղաներին,
ասելով.

— Յարի եղէք, ի ուր Աստուծոյ, միակ որդիս
տանը հոգեկարքի մէջ է, թողէք այժմ նս ներս
մտնեմ բժշկի մօտ ու շտափով դուրս գամ խըն-
դրում եմ, ապաշում եմ

Նրա գոզգոջումն ձայնը պարսւնակում էր իր մէջ
այն աստիճան ցաւակցութիւն, որ բոլորն էլ համա-
ձայնեցին նրան ներս թողնել:

Դուրս եկաւ ներսի հիւանդը և խրսխտաց բը-
ժըկի ձայնը.

— Գիւլիւմեան!

Կայծակի արագութեամբ շտափեց ներս վերո-
յիշեալ կինը և գուռը ծածկեց:

Բժիշկը զարմացական և սպասողական հա-
յեացը ձգեց տիկնոջ վլայ, նայելով նրան ստից
ցգլուխ:

— Ի՞նչ կայ, հարցրեց նա ակամայից, բերանը
բանալով ու նստելով սեղանի մօտ իր բազկաթոռի
վրայ:

— Պարսն բժիշկ, հս մի չքաւոր կին եմ, ու-
նիս մի աշբի լիս սրգի

— Գիւծ ես, ի՞նչ է, ի՞նչ ես հէքեաթներ ա-
սում, հիւանդութիւնկ պատմիս, խրսխտաց բժիշկը,
ընդհատելով նրա խօսքը:

— Չեք շարը տանեմ, պարսն բժիշկ, միք նե-
ղանակ, գոզգոզալով խօսեց կինը,— որդիս որմնա-
գիր է, մենակ նա է իմ հաց բերողը, ինձ պահողը.
այսօր աշխատելիս վայր է ընկել բարձր պատից ու

արինը ջրի պէս հոսում է վէրքերից:

— Լաւ, նւր է որդիկ, հարցրեց բժիշկը:

— Տանի է, պարտն բժիշկ:

— Դու խելագար ես, այ կին, հիւանդին չես բերել, դու ես եկել, բարկացաւ նա:

— Ախր նա չի կարող զալ, մեռնում է, հոգու հետն է, եկել եմ, որ ձեզ տանիմ, դուք փրկէք նրան:

— Լաւ կը զամ, կը տեսնեմ. միայն դու երեք բուբլի վիզիտի և կառքի փողը թնդ այստեղ:

— Ախ, ձեր շարը տանիմ, պարտն բժիշկ, ես ազրատ եմ, ցամաք հացի փողն ու տան վարձը տվէս էր աշխատում. ձեր հոգու համար եկէք, զեղի փող անզամ չ'ունինք

Բժիշկը գէմքը խոժոռեց. նա ակնոցները վերցրեց աշքերից և բարկացկոտ հայեցքով սկսեց հայել տիկնոջ վրայ, որ արդին սոսկում էր բժշկի հայեցքից:

— Ի՞նչ, բարկացաւ բժիշկը, ձրի, այն էլ տուն զամ, թողնեմ այս հիւանդներին, զնա, զնա, էլ ինձ մօտ չը զաս, ասաց նա և տեղից վեր ցատկեց, ինոչ թից բանեց և բօթեց:

— Պարոն բժիշկ խնդրում եմ, ապաչում եմ, մի մերժէք, ահա իմ վերջին կոտէկներս, որ հացի և գեղի համար եմ պահել, ասաց կինը լալով և զրպանից հանելով թաշկինակի մէջ կապած փողը, որ մի բուբլի էք, մեկնեց գէպի բժիշկը:

— Հանձը ես անում, էդ բու գլխովդ տուր,

ազքատ եմ, ի՞նչ եմ, որ մի մանէթ ես տալիս, զընա ուրիշին դիմիր, ժամանակս մի խլիր: Գնա տըզիդ տար բանիցին, այստեղ կը լաւացնեն:

— Այնտեղ առացին, որ տեղ չը կայ և ձրի էլ չեն վերցնում, պատասխանեց կինը, կռանալով ու վերցնելով իր մի բուբլիանոցը, որը բժիշկը շպրտեց գետին:

— Ե՞ն, լաւ, ես մեղաւնի եմ, որ չեն լնդունում, զնա ուրիշ բժշկի տար, հենց ինձ տեսար ու եկար տղրուկի նման կպար:

— Ասում են, որ գուք լաւ բժիշկ էք, գուք կը փրկէք որպուս կեանքը:

— Ասողը զլուխը բարով է տուել. զնա, զնա, մի ուշանար, տես, ինչքան սպասողներ կան, ժամանակս մի խլիր:

— Ախ, պարտն բժիշկ, նա հենց հիմայ զուցէ մեռնի, շուտով օկնութեան հասէք, խնդրում եմ:

— Գրանից աւելի լաւերն են մեռնում, բայց ես երկար խօսելու զլուխ չ'ունեմ, զու հայերէն չես հասկանում:

— Պարոն բժիշկ, գոնէ, բէցէպտ զրեցէք, տուէք, գուք նեղութիւն մի բաշէք զալու, աղերսեց կինը, չոգելով բժշկի առաջ, ու կամնալով համբուրել նրա ստները:

— Թո՛հ, պատիժ է, թքեց բժիշկը ու խուսափեց կնոջից:

Սա պարձեալ հանեց մի բուբլին ու զրեց

սեղանի վրայ:

— Դէ, վերցրու փողք ու զնա, Եկ որ ամեն աղբատ ու խեղճ տուն թափուի ձրի բժշկուելոս, Եկ մը կ'երթայ, Էլ ի՞նչի համար է լշշեթիցան:

Բժիշկը զանդը տուեց:

Ծառան ներս վաղեց:

— Թուրս տար այս կնոջը, հրամայեց նա:

Թշուառ կինը իսպառ կտրելով յոյուը բժշկի բարեբարսւթիւնից, ածօթից կարմրած, թաշկինտկով ծածկելով դէմքն ու արտասուալից աշրեր, զլիիկոր անցաւ դաշիճի միջով:

Փողովուրդը, որ լսել էր ներսից բժշկի վարձի մասին գոռզուոցները և ականջ էր զնում, խղճանարուեց այդ կնոջ վրայ:

Հատերը յօժարակամ դրամական նուէրներ տուին և յետ գարձրին նրան բժշկի մօտ, որպէս զի այդ փողը վճարէ և բժշկին առնէ որպուն օգնելու:

Կինը չնորհակալութիւն յայտնելով նրանց իսկայն ներս վագեց բժշկի մօտ:

— Ահա, պարսն բժիշկ, ձեր վարձը, ինկրեմ, ընդունելութիւնից անմիջապէս յետայ բարեհաճէր գալ, եմէ ոչ որդիս կինդանի շի մնայ:

Վերջին խօսքերի վրայ արտասուները խեղդեց նրա ձայնը:

— Հապա ասսւմ էիր, թէ շնանիմ, ուզում էիր ինձ խարել, դէմքը ծռմռելով խօսեց բժիշկը:

— Սրանք իմ փողերը չեն, պարսն բժիշկ, բա-

րի մարդիկ մարդասիրաբար նուիրեցին ինձ, որ որդուս կեաները փրկեմ, պատասխանեց կինը կարմըրելով:

— Դէ լաւ, զու զնա, ասաց բժիշկը, փողերը ձգելով զրպանը, հասցէդ թող, ես կը զամ առաւուեան:

— Ա՛հ, պարսն բժիշկ, ի՞նչ էր ասում, խղճացէք ինձ, այդ ուշ կը լինի, խնկրեմ հենց այսօր ընկանելութիւնից յետոյ եկէք:

— Եմ կարող, հիմա աւելի կարեսը հիւանդների մօտ եմ զնալու այցելութեան, ես իմ բանը զիտեմ, շատ մի խօսիր, զու զնա, աղաղակեց բժիշկը:

Խեճ կինը այլիս չը խօսեց, հասցէն թողնելով բժշկի մօտ, գուրս ելաւ և շտապից տուն:

Ներքնյարկեայ մի խոնաւ նկուզում պատի մօտ պրած տախտի վրայ, հին պատառուած անկողնում պատիած էր մի նիհար երխտասարդ, որի մարմնի զանտղան մասերից արիւն էր հոսում և ներկում անկողինը: Կուրծքը շատ գանդաղ և աննկատելի կերպով վեր-վայր էր անում, որի ժամանակ կրծքի և կոկորդի միջից խոխուոց էր լսւում: — Նա շինութեան ժամանակ բարձր պատից վայր էր ընկել և չարգուել: Արիւնն անընդհատ հոսում էր: Նա զիտակյութիւնը կորցրել էր և ընկած էր կիսակենդան:

Մահն իր սառ թիերն արգէն բացել էր նրա վրայ և բոպէ առ բոպէ մօտենում էր կլանելու նրա երխտասարդ կեաները:

Հարհանիերից միքանիսը նստած էին նրա անկողնու մօտ և լուռ դիտում էին նրան:

Դրսից լսելի էր ձիւնախառն քամու ոռնոցը,
որ փշելով գոան ու պատուհանի լայն ճեղքուած-
ներից, ցուրտ էր աարածում ներսը:

Յանկարծ գուռը բայցուեց և ներս մտաւ մայ-
րը՝ վերոյիշեալ կինը, որ լալով բժշկի մօտից վե-
րադառնում էր:

— Սեգրակ ջան, ինչպէս ես, վրայ վագեց նա
ուզգակի հիւանդի անկողնու մօտ:

Տեսնելով, որ հիւանդը ոչ մի շարժում չը գոր-
ծեց, դժբախտ մայրն ընկաւ վիրաւոր որդու արիւ-
նոտ անկողնու վրայ ու ոկտեց հեկեկալ:

Ժամերն անցնում էին իրար յետեից: Դառձու
կէս զիշեր: Դրկիցները զնացին իրանց տները: Գետ-
նափորում մնացին մայրն ու որդին, որ գեռ ուշա-
թափ էր: Մայրը ամեն մի շշուկ լսելիս նայում էր
կոանը, կարծելով, թէ բժիշկը զալու էր այդ ժա-
մին: Բայց բժիշկը չ'եկաւ այդ օրը: Այլ միայն հե-
տեհալ օրը՝ առաւտեան բարեհաճեց այցելել տա-
ռապեալ հիւանդին:

Իսկ զիշերը հիւանդն արդէն արիւնաքամ էր
եղել, և դժբախտ մայրը կիսախելազար դրտթեամբ
ողբում, կոծում էր, մազերը քաշքելով և որդու
անշնչացած վիրաւոր դիակը համբուրելով....

ՃԱՐԱԿՈՍԸ

(Հետեւողութիւն)

— Լաւ ես պատրաստուել խօսելու համար,
զարձաւ Միսարը Տիրանին, որոնք մտերիմ ընկերներ
էին.— զիտես, բազարի ամբողջ ազդաբնակութիւնը
ներկայ կը լինի, աշխատիր փայլես:

— Գիտեմ, պատասխանեց Տիրանը սառնարիւ-
նութեամբ, մտածմունքներից սթափուելով:

— Աի՞, երանի թէ քո չնորհքի մի մասը ես
ունենայի, անկեզծօրէն հաճոյախօսեց Միսարը.—
եղբայր, ամեն տեղ քո մասին են խօսում, հրախ-
ւիրում են պարանանգէններ և երեկոյթներ:

— Հա, ճիշտ, երէկ երեկոյ, երբ զու զնացիր
իմ մօտից, այս նամակին ստացայ, տաց Տիրանը,
և ծոցի գրպանից հանելով մի նամակ, կարդաց.

«Մեծապատիւ պարոն Տիրան Համբակեան! Նե-
րեցէք, որ ես անծանօթ տեղովս նամակ եմ զը-
րում ձեզ: Ես զիշեր «Ղատարիա» ունեմ, մի մեծ
ազիատսկի զարմօն եմ լատարիա զցում: Այդ պատ-
ճառով մի «վեշեր» կը լինի, որտեղ կը լինեն շատ
չէնէլ տպէրը, օրիորդներ: Խնդրում եմ, գուք էլ գաք,
ճառեր խօսէք: Անցեալ զիշերուայ երեկոյթում ես
ձեզ տեսայ, թէ ինչպէս լաւ էիր խօսում գրաբառ

լեզուով, մանաւանդ էի բանը շատ սիրեցի, որ դալի մէջ տեղում կանգնած, բարձր ձենով ասում էիր ձեռներդ, ուսոներդ թափ տալիս, աշքերդ ծռմռում, ու դիմունանք էլ որ ծիծազում էին . . . : Խնդրում իմ անպատճառ զաք: Ազրէսը փլան թաղ, չօլախ Օսէփի տունը-միջի ատէժ:

Նիկօլ Մամազով»:

Համբակեանը ինքնաբաւական կերպով ծալեց համակը, դրեց ծոցի գրպաննե ու տսաց.

— Տեսար, մինչի ուր է հասել իմ անունը, որ հրաւիրանամակներ են ուզարկում ինձ:

— Բայց ամեն տեղ մի լայեղ անի գնալու, ամօթ է, վրա բերեց Միսաքը. — օրինակ, այս վիշեր, չը գնանք այդտեղ:

— 2է, ընդհակառակը, քանի շատ տեղ մտնել, ենել, այնքան լաւ, այնքան աւելի հեղինակութիւնս կը տարածուի. պէտք է ժողովրդական մարդ լինել: Ճառախօսը պարտաւոր է նոյնիսկ գինեաներն էլ մտնել, ճառել, յորդորել, չէ որ այնտեղ էլ մեծ բազմութիւն է լինում

— Հա, ճիշտ ես ասում, Տիրան, ես համաձայն իմ քեղ հետ, խսկոյն համոզուեց Միսաքը. — այս իրիկոն անպատճառ գնանք:

— Հա, ճիշտ, անցեալ օրը երեկոյթում էլ ուրիշ ինչ կարծիք էին յայտնում իմ մասին, հարցրեց Տիրանը, մաղերը սանդրելով:

— Երէկ ասացի էլի՛, որ մեծ մասամբ հաւանում

էին քո ճառերը, ոտանաւորները, ոմանը իրար հետ խօսում էին «ազգասէր երիտասարդ» «ինտելիգէնց» «հոետոր» անուանելով քեզ, իսկ միրանիսներն էլ, իհարկէ քո թշնամիները, ծիծազում էին քո վրադ «օյինբազ» «թիկթիսոլիկ» «մասսարա» անուանելով:

— Այդ ոչինչ, հասարակական մարդը միշտ թրշնամիներ է ունենում: Բայց դու այն ասա, թէ օրիորդներն ինչ էին խօսում իմ մասին, յարեց Տիրանը ուշադրութիւն չը զարձելով այդ ածական-ների վրայ:

— Նրանք էլ շատ ծիծազում էին, ուրախանում քո խօսքերիդ վրայ. այն օրիորդը, որին շատ հաւանական էր միւսներին. «ափսոս որ ուսում չ'ունի պ. Համբակեանը, ելթէ ոչ երեկի զրող կը դանար:

— Խսկապէս, ընդհատեց Միսաքին-Տիրանը, ափսոս որ չը կարողացայ զպրոցն աւարտել, ատառեստատ վերցնել, այն ժամանակ ես, երկարյում եմ, ինչ կը լինէի: Բայց ոչինչ, այնքան զրեբ եմ կարգացել, այնքան երոպակտն բառեր վիտեմ, որ ատահստատ ունեցողը չի գիտենայ: Այ, շուտով իմ այն սիրային, բանաստեղծական աշխատութիւններս լոյս կը հծայիմ, այն ժամանակ ամբողջ քաղաքում իմ մասին կը խօսին:

— Հա, շատ լաւ կը լինի, աշխատիր շուտ ողպակել, յորդորեց Միսաքը. բայց շուտ արա, շտապիր, արդէն ժամի տասն է, գնանք:

— Թեռ վաղ է, չէ որ գրած էր, թէ յուղարկաւութիւնը ժամի 11-ին է և պատարագն էլ քառաձայն է լինելու, այսպէս որ ժամի 2-ին հաղիւ կարգամ ճառս: Դեռ թէյ խմենք:

Նրանք նստեցին, թէյ խմեցին, միմոյն ժամանակ խօսելով իրանց շոյող նիւթերի վրայ: Փոքրինչ յետոյ թէյը վերջացրին, և զուրս ելան:

Փողոցի վերին ծայրում նրանք հանգիպեցին մի ննջեցեալի: Բազմութիւնը մեծ էր, բացառադէս օրիորդներ էին կրում զագաղը:

Տիրանն ու Միսաքը հետարրբրուցին: Ննջեցեալը մի վաղամեսիկ օրիորդ էր, որին նրանք չէին ճանաշում:

—Եկ, Միսաք, այս օրիորդի վրայ էլ ճառ խօսեմ, որա պատարագը շուտ կը վերջանայ, տես, օրիորդ Փիլիպասեաններն ու Սոնան էլ մէջերն են:

—Ճիշտ, շատ լաւ կը լինի, վաւերացրեց Միսաքը, — զու անպատճառտից էլ լաւ ես խօսում:

—Սպասիր, յիշեմ միրանի ցիտատներ, մահուան մասին ձիլէրից, ձէկսպիրից, Բաֆֆից, ընըլ . . . հա, եկ, եկ, հետեւնք զագաղին:

Այս ասելով, նա խկոյն տխուր արտայայտութիւն ընդունեց և Միսաքի հետ թեանցուկ խառնուեցին ժողովրդի մէջ: Նա ճանապարհին «ճամբարի» մարդկանցից տեղեկացաւ ննջեցեալի անունը, տարիքը և մահուան պատճառը:

Պատարագից յետոյ, երբ պէտք է զագաղը

վերցինին, Տիրաննը իրաւունք խնդրեց քահանայից ու կանգնեց զագաղի ծայրին: Նա ակնոցները գլուխ աշբերին, թաշկինակը ձեռին բռնեց ու կոկորդը մաքրելով, սկսեց.

—Այն, շատ ցաւալի տեսարան է, վերին աստիճան ցաւալի: Ո՞հ, օրիորդ, ինչու մեռար, ինչու. շէ որ քս ծնազները, աղբականները մեծ վշտի մէջ կ'նկնին, կը լաց լինին, կը սպան: Գիտէր, յարգելի պարոններ ու տիկիններ, գիտէր, թէ ինչը ան լաւ օրիորդ էր հանգուցեալ օրիորդ Աննան:

—Աննա չէ, Գայանէ, կամացուկ ուզգեց Միսաքը, որ Տիրանի մօտ էր կանգնած և ուշագրութեամբ լսում էր նրա ճառը և սքանչանում ընկերոջ չնորհի վրայ:

—Ախ, ներսպութիւն, Գայանէ, այն, օրիորդ Գայանէ: Անգութ հասարակական մահը, այն, ասում եմ, մահը, նախանձեց օրիորդ Գայանէի լաւ յատկութիւններին ու 23 տարեկան հասակում վերջ տուեց նրա կեանքին:

—Քա, էս ով է, ով մեծրից սրան բարողելու, մեց թէ 23 տարեկան, ըանի որ նաշար Գայանէն 17 տարեկան թամամ չէր, ասում էր մի կին:

—Կուլի, Գայանէի կաւալէրն է էլի, չնջաց մի սպուռ կին մօտի կնոջը:

—Բաֆֆին ասում է, շաբանակեց ճառախօսը տւելի զոռալով և թաշկինակով ճակատի քրտինքը մաքրելով, — մարդիկ կան, որոնց մահն տւելի վը-

տանկաւոր է քան նրանց կեանքը. այս, մահը շատ վտանգաւոր է ու անխիզճ: Նա փոխանակ ծերերին մեռյիելու, այսպիսի մատադների է խեղզում, այս շատ ցաւալի է

Եւ գեռ ճառախօսը ուղում էր շարունակել ճառը, երբ քահանան զզջալով, որ իրաւունք տուեց խօսելու, ընդհատեց նրան, ասելով, «բաւական է» և սկսելով յուղարկաւորութեան շարականը:

—Քա, էս ընէզեանն մրգանց լուս ընկաւ, հարցրեց մի կին մօար կանգնած տղամարդին:

—Էծեր կ'ունենայ, շնչում էին միմիանց մէջ լայն շարժարանի համբարները:

Ննջեցեալին տարան: Տիրաննը ինքնարաւական կերպով և հոգարասւթեամբ նայելով ժողովրդին, առաւելապէս օրիորդներին, Միտարի հետ դուրս երաւ և շտապեց N . . . եկեղեցին, ուր տարել էին հանգուցեալ Գործիշեանին:

Եկեղեցին դատարկ էր, ննջեցեալին տարել էին: Տիրանն ու Միտարը վաղէվաղ հասան գերեզմանոց, ուր նոր էր մտնում սպակառը: Նրանք գերեզմանի մօտ յարմար դիրք գրաւեցին և սպասեցին ճառերին: Ահա սկսեցին խօսել: Բազմութիւնը շատ մեծ էր. ներկայ էին ամբողջ ինտելիգենցիան, ներկայացուցիչներ, գրադիներ, բանաստեղծներ, պկրիտիկոսներ և ուրիշ շատ բարձր անձինք: Խօսում էին յայտնի գրադիներ ու մտաւոր պաշարի տէր մարդիկ: Ճառերը աղզու էին և տպաւորիչ:

ծը բղխսում էր սրտի խորքերից, զգացմունքով լի, բանաստեղծական ոճով և հուտորական դարձուածր-ներով:

Տիրաննը մերթ մտածում էր չ'անել մի մեծ յանդուգն քայլ, — չը խօսել, քանի որ ներկայ էր յուսաւոր գասը և խօսում էին իրանից անհամեմատ խելօրներն ու կրթուածները: Ինքը նրանց առաջ մի մրջիւն անզամ չէր: Ինքն էլ կարող է բարձր գոռալ, մանիէրներ անել, ցիտատներ մէջ բերել, ուրեմն պէտք է խօսել անպայման:

Ահա նա՝ մէկի ճառից յետոյ, իսկոյն առաջ եկաւ հոգաթմբի վրայ, ակնոցներն ուղղեց աչքերին, նայեց գաղաղին ու գոռաց:

—Այս, ահ, այս, սոսկալի տեսարան, մի հասարակական գործիշ ողառկած է միրանի չոր տախտակների մէջ և ահա, այս, ահա իշնելու է այս սառը գերեզմանի մէջ և հոգով ծածկուելու է յաւիտեանս յաւիտենից: Նա, այս, հասարակական գործիշ էր, հասարակական մշակ, այս, բայց մահը, աներեսոյթ մահը խլեց նրան աշխարհից:

Նա հետզհետէ ուժեղացնում էր ձայնը, գոռալու սահմանից էլ անցնելով, կարմրատակում էր, ձեռները շարժում էր շարունակ և աւելի ոգեւորւում:

Բազմութիւնը սթափուածի նման, լուռ, լուռ էր նրան, միենոյն ժամանակ ապշական հայացքներ ձգելով միմիանց վրայ.

—Այս, հանգուցեալ Գործիշեանը աղզի մշտի

էր, նա կիշեր-ցերեկ, ըլլը՝, այն, ծառայում էր ազգին; Ամեն օր, ամեն ժամ, ամեն րոպէ, ամեն վայրկեան թէ տանը, թէ գուրսը, զրիշը ձեռին էր և զրում էր: Ըլլը՝, հանգուցեալը մեռաւ, մենք նըանից զըրկուեցինք: Ահա ներկայ է ամբողջ ինտելիգենցիան, որ եկել է հանգուցեալին գերեզման իջեցնելու, մահարձան կանգնելու: Ո՞հ, լայէք սարեր, ողբացէր ձօրեր, խաւարեցէր աստեր, այն, ասում եմ, ասուցեր խաւարեցէր, որովհետեւ նա էլ մի աստղ էր և ահա ընկնում է գերեզման, այն, բայց աշխատինք հետեւ, տարաժամ թէ անտարաժամ նրա օրինակին:

Ճառի պաշարն ընդհատուեց: Ճառախօսը, մի ըիշ կանգ առաւ, սկսեց քրտինը մարրել երեսից:

Արդէն բոլորն էլ ձանձրացել էին այդ տգէտ ու անհամ ճառից: Ճառերը, նրան խելազար կարծելով, ուզում էին թեկոց բռնել ու փռնտել: Բայց նա այդ չէր զգում, ընդհակառակն, կարծում էր, թէ հիացել են նրա մտքերով, ճարտասանութեամբ:

Մէկ ինտելիգենտ մօտեցաւ հայր սուրբին և ասաց:

— Հայր սուրբ, չի կարելի այդպիսի համբակ-ներին թոյլ տալ մի այսպիսի յանգուգն քայլ անել, ոտ ծաղր է ուղղակի:

Հայր սուրբը մօտեցաւ և ուզում էր խնդրել նրան, որ վերջացնէ ճառը, բայց ճառախօսն արդէն շարունակեց:

— Այս, նա մարդ էր, մարդ, բառիս խելական

մտքով, ուստի նա միանգամայն պիտի երթայ երկերի արքայութիւն, որ պատրաստուած է արդարների համար: Ողբալի տեսարան, ամեն մարդ պիտի ողբայ, լաց լինի, արտառւի: Գոզեր կան, աւազակներ, ինչու անգութ մահը հենց սրան տեսաւ, ոս զող չէր, ջիբգիր չէր, ըլլը՝, այսինքն գրանահան չէր, ըլլը՝, անպէտք չէր, այլ, ըլլը՝, մի պէտրական մարդ, գաղափարական: Երանի սրա տեղ մեռնէին հարիւրաւը աւազակներ, գոզեր, մարդառազաններ: Այս, . . . ըլլը՝ . . . այն, ասում եմ....

Եւ դեռ նա շատ խայտառակ բաներ պիտի տուէր, երբ բոլորը միաբերան զայրացան նրա դէմ, տրահցացին այդ ժամավաճառութեան դէմ:

— Բաւական է, պարոն, ասաց հայր սուրբը բարձրածայն, մօտենալով նրան,— հերթը տուէք ուրիներին:

Ճառախօսը կարմրած մինչի ականջները, ըրտնաթոր, ակնոցները իջեցրեց աշրերից և զլուխ տարով ժողովրդին Միսարի հետ հեռացաւ:

Նա արդէն իր պարտը կատարած էր համարում և հաւատացած էր, որ բոլորից լաւ ինըը խօսեց:

— Եկ, զնանք, ամբողջ ինտելիգենցիայի աւաց էլ փայլեցի, ուրեմն այս օրուանից ես աւելի մեծ րեպուտացիա ունիմ:

Եւ նա շապասելով թագման վերջուղութեանը, մտքում ուրախանալով, ընկերոջ համապատասխան պիտի տուի: . . .

7/31 1922

Ա. ԱՅԱՍՏ ԱՅԱՍՏ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

| Տեսք | Վ Ե Ր Ն Ա Գ Ի Բ | Երես |
|------|---------------------------|--------|
| 1. | Օբայի հերոսները | 2—22 |
| 2. | Հոգեհացը | 23—31 |
| 3. | Մնմեղ զոհ | 33—41 |
| 4. | Սիրայ յարութիւն | 43—70 |
| 5. | Բանտարկեալները | 71—84 |
| 6. | Բժիշկը | 85—92 |
| 7. | Ճառախօռը | 93—101 |

Ե Զ Ք Ի Ը Ն Կ Ն Ո Ղ Ա Խ Բ Լ Ն Ե Բ :

| Երես: | Տ Ա Ղ | Տ Ա Ղ Ա Ժ Ծ Լ : | Պէտք է լինի: |
|-------|---------------------------|------------------|------------------|
| 19 | Վերից 3-րդ | չերմառանդութեամբ | չերմեռանդութեամբ |
| 20 | » 3-րդ | ստին | ստի |
| 21 | » 5-րդ | անդ | անդ |
| 25 | » 2-րդ | կարգադրելը | կարգադրիչը |
| » | » 6-րդ | ջէհեներից | ջէհեներից |
| » | Վարից 10-րդ | սեղանը | սեղանը, |
| 26 | » 8-րդ | Տպէրը | Տպէրը, |
| » | » 5-րդ | թամադիա | թամադիա, |
| 28 | Վերից 2-րդ | լաւ, կլնի, | լաւ կ'լնի, |
| 29 | Վարից 13-րդ | ծիպծիրանց | ծիպծիրանց. |
| 33 | » 3-րդ | ասաց | ասաց, |
| 34 | Վերից 13-րդ այդ վախկատին, | աղվակատին, | |
| » | Վարից 8-րդ | վայ, | վայ, |
| 35 | » 12-րդ | լսնդիրը | լսնդիրել |
| 36 | Վերից 1-րդ | յուզված | յուզուած |
| 37 | Վարից 8-րդ | կոկորդը | կոկորդին |
| 45 | Վերից 3-րդ | սրտից, | սրտի |
| » | Վարից 2-րդ | ծէր | ծէր |
| 64 | » 10-րե | Ռնց | Ռնց |

ՀՀ Ազգային գրադարան



NL0323888

28613

